ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՇԱԲԱԹ, 14 ՀՈՒԼԻՍԻ 2017Թ.
№ 25 (443)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

âÝãÇÝ« ÇÝãå»ë ²ñ³ñ³ ïÇÝ
Ý»ï³Í ù³ñ`
¸ ³ í»ñÁ ë»ô Ù³ñ¹áõÏÝ»ñÇ
³Ûï³ ³ÝÏ³ñ-
ú¯« âÑ³ë³Í ùÕ³ÝóùÝ»ñÇÝ
³Ý. ³Ù ùá`
ì³ûñ»Ý Ã³÷ íáõÙ...
º í³éÑ³í»ï ÏáñãáõÙ
³Ý½áñáõ ³ÝÏ³ñ«
ÆÝãå»ë ³ÝÑ³ë²ñ³ñ³ïÇÝ
Ý»ï³Í ù³ñ©©©
ºÔÆÞº â²ðºÜò

Չորրորդ բանակային կորպուսի երկու տասնամյակը

Հոբելյանական զորահանդեսին հրավիրված էր նաեւ «Սյունյաց երկիրը»

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի չորրորդ բանակային կորպուսը 20 տարեկան է: Հիշարժան տարեդարձին նվիրված զորահանդես տեղի ունեցավ Եղեգնաձորում, որտեղ տեղակայված է զորամիավորումը: Հայաստանի հարավարեւմտյան սահմաններ-ը (Սյունիք, Վայոց ձոր) պաշտպանող զորամասերի հիմքի վրա ստեղծված չորրորդ բանակային կորպուսը, որ տարբեր տարիներ ղեկավարել են գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովը (այժմ՝ ՀԱՊԿ քարտուղար), գեներալ-լեյտենանտներ Մարտին Կարապետյանը, Արշալույս Փայտյանը, Վալերի Գրիգորյանը, գեներալ-մայորներ Սեյրան Սարոյանը, Պողոս Պողոսյանը, Կամո Քոչունցը, Անդրանիկ Մակարյանը, անցած երկու տասնամյակի ընթացքում մարտական փառավոր ուղի է անցել, ճանաչվել ՀՀ զինված ուժերի լավագույն զորամիավորում՝ դառնալով հայկական բանակի ամենամարտունակ զորամիավորումնե-

էջ 2

Հարցազրույց Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, գնդապետ Սենոր Հասրաթյանի հետ

– Պարոն Հասրաթյան, հունիսի 21-ին Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայության տարածած հաղորդագրությունը, թե իբր կանխվել է դիվերսիոն ներթափանցման փորձ եւ գերեվարվել մեկ հայ զինծառայող, հերթական ապատեղեկատվությունն է: Ի՞նչ կավելացնեիք այս առիթով:

– Տպավորություն կա, որ Ադրբեջանի ռազմատեղեկատվական ու քարոզչական համակարգը գործում է իր համար հատուկ ստեղծված մի վիրտուալ տարածքում, որտեղ հորինված յուրաքանչյուր «տեղեկություն» նախատեսված է ոչ այնքան ներկայացնելու իրականությունը, որքան ապակողմնորոշելու սեփական եւ միջազգային հանրությանը: Պետք է ասեմ, որ հունիսի 21-ի հետ կապված հաղորդագրությունը եւս այդ վիրտուալ տարածքից է եւ ուներ, նախ՝ ներքին լսարանի պարզունակ հետաքրքրությունը բավարարելու նպատակ: Ասել է թե՝ սեփական ժողովրդին ցույց տալ, որ տարիներ շարունակ ադրբեջանական բանակի հզորացմանը նպատակաուղղված միլիարդավոր նավթադոլարներն իրենց գործն անում են եւ նման հատկացումներն արդարացված են հենց այսպիսի «հերոսական» գործողություններով: Երկրորդ՝ միջազգային հանրությանը ցույց տալ Հայաստանի ագրեսոր լինելը, որ Հայաստանը ոչ միայն Արցախն է բռնազավթել, այլեւ հատուկ նշանակության ուժերով փորձում է ոտնձգություն կատարել անգամ հայ-ադրբեջանական սահմանին: Եվ երրորդ ու, թերեւս մեր համար ամենագլխավորը՝ նման ապատեղեկատվություններով հոգեբանական բացասական ներազդեցություն թողնել հայ հասարակության վրա: Մի հանգամանք, որը հաճախ նրանց մոտ ստացվում է եւ, որ շատ ցավալի է, ոչ առանց մեր որոշ լրատվամիջոց-

ների չմտածված օժանդակության: Արտատպելով նման ապատեղեկատվությունները, հայրենական զանգվածային լրատվամիջոցները, կամա թե ակամա, ընդլայնում են Բաքվի ագիտպրոպի հասանելիության շրջանակները եւ այդ կերպ նպաստում նրա հորինվածքների տարածմանը: Իսկ նման ճանապարհով ապահովել սեփական հասարակության տեղեկացվածության իրավունքը, ինչպես ոմանք են իրենց այդօրինակ կատարածը հիմնավորում, եթե ոչ սխալ, ապա առնվազն անհեռանկար

էջ 3

Ինչպես չհիանալ «Սյունյաց երկիր» թերթով

Հոբելյանական տոներին ամեն մի ժողովուրդ՝ հանձին հոբելյարի, գալիս է հարգելու, պսակելու ինքը իրեն, իր շնորհքը, իր մտավոր-հոգեկան ուժերը:
Հովհաննես Թումանյան

Հրապարակի վրա է «Սյունյաց երկիր» թերթի հերթական հատուկ համարը՝ նվիրված հայ աշուղական երգարվեստի երախտաբար դեմքերից մեկի՝ երգահան, բանաստեղծ Գուսան Աշոտի ծննդյան 110-ամյակին:

«Սյունյաց երկրի» մի նոր, բերկրառիթ խիզախությունը պետք է համարել այս հրատարակությունը, որ կարելի է անվանել պատկերագիրք: Մտահղացումն իրականացնելու հնարավորությունները շատ չէին, առավել եւս, որ Գուսանի արխիվը «հասանելի» չէր, սակայն խմբագրակազմը հաղթահարել է դժվարությունները՝ ընթերցողին մատուցելով հաջողված հոբելյանական համար՝ այդ ասպարեզում տարիների կուտակած հարուստ փորձի, մասնագիտական պատրաստականության, հոգեւոր արժեքների նկատմամբ նվիրական վերաբերմունքի շնորհիվ:

Հայ մշակույթին «Սյունյաց երկիր» թերթի մատուցած ծառայությունները միանգամայն անուրանալի են ու երախտապարտության արժանի: Մեր մեծերին նվիրված հատուկ համարները, որոնք տարիների ընթացքում հրատարակել է թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանը, իրավամբ լրացրել են մի մեծ բաց Սյունյաց հոգեւոր արժեքների ուսումնասիրման ու լուսաբանման ասպարեզում: Հաճախ մեզանում գրական հոբելյաններն աննկատելիորեն անցնում են անտես ու անվերաբերմունք, ինչպես օրինակ Սերո Խանզադյանի ու Սուրեն Այվազյանի դարադարձները 2015-ին, եւ միայն ի պատիվ «Սյունյաց երկրի» պետք է առանձնաշեշտել այն մշակութանվեր առաքելությունը, որ հանձն է առել խմբագրակազմը՝ թերթի հատուկ հրատարակություններով գնահատել մեծերին: Դրա համար նախ պետք է անհրաժեշտ չափով ի վիճակի լինես հասկանալու ժողովրդի հոգեկան գանձերը, դրանց սերնդակերտիչ ու սերնդապահպան դերը, ինչը «Սյունյաց երկրի» պարագայում կայուն աշխատանքային սկզբունք է ու աշխարհայացքային հանգանակ:

Ինչպես չհիանալ այս թերթով, որ ժամանակ է գտնում դժվարին իրապայմաններում, բազմաթիվ այլ մտահոգությունների կողքին համախմբելու նաեւ գրական ուժերը, ձեւավորելու գրական դաշտ ու մշակութային գիտակցություն, վերականգնելու խզված հոգեկան կապերը, պեղելու, արեւերես հանելու մեր հոգեւոր գանձերը, փոխանցելու դրանք սերունդներին՝ ի պահ:

Ինչպես թերթի մյուս հատուկ համարները՝ նվիրված Խաչատուր Աբովյանին, Մովսես Տաթեւացուն (Խոտանանցի), Գրիգոր Տաթեւացուն, Ակսել Բակունցին, Սերո Խանզադյանին, Սուրեն Այվազյանին, Համո Սահյանին, Նիկողայոս Ադոնցին եւ այլոց, այս հրատարակությունը նույնպես նյութերի ընտրությամբ, նպատակայնությամբ, կառուցվածքային ինքնատիպությամբ, որակով, մնայունը, առաջնահերթն ու արժեքավորը տեսնելու-գնահատելու

էջ 5

ԱՆԴՐԱՆԻԿ ՇԱՂՈՅԱՆ.
«Ջե՛րծ մնացեք մեքենան ոչ սթափ վարելուց եւ արագության գերազանցումից. չէ՞ որ վայրկյանների ընթացքում ճակատագրեր կարող են խաթարվել»

ՀՀ ճանապարհային ոստիկանության 6-րդ վաշտը սպասարկում է 331 կմ միջպետական ճանապարհ, կարճ ասած՝ Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերը, որոնցից յուրաքանչյուրում կա մեկ դասակ: 2015թ. մարտի 23-ից ՀՀ ոստիկանապետի հրամանով ճանապարհային ոստիկանության 6-րդ վաշտի հրամանատար, փոխգնդապետ Անդրանիկ Շաղոյանը նշեց, որ հիմնականում աշխատանքները կազմակերպվում են երկու հերթափոխով՝ 08-16.00, 16.00-01.00, անհրաժեշտության դեպքում՝ շուրջօրյա: Հատկապես ամռան ամիսներին բավականաչափ ծանրաբեռնվում է ճանապարհային ոստիկանների աշխատանքը՝ կապված երեխաների՝ ճամբար, նորակոչիկներին՝ տարբեր զորամասեր, այդ թվում՝ Արցախի Հանրապետություն ուղեկցմամբ եւ այլն: *«Ամսական 2-3 անգամ ուժեղացված ծառայությունները ստուգայցեր են կազմակերպում՝ կապված ոչ սթափ վարորդների հայտնաբերման, արագության գերազանցման, ինչու չէ՝ փոխարինված պետհամարանիշներով ավտոմեքենաների, ոչ ճիշտ վայրում կայանելու եւ մի շարք այլ խախտումների բացահայտման հետ: Սա տարբերվում է մյուս ծառայություններից նրանով, որ ճանապարհային ոստիկանության տեսուչն իրավունք ունի կանգնեցնել յուրաքանչյուր վարորդի՝ անկախ նրանից՝ խախտում եղե՞լ է, թե՞ ոչ»,* – նշեց Ա.Շաղոյանը՝ հավելելով, որ մոտ վեց ամսվա կտրվածքով հայտնաբերվել է 191 ոչ սթափ վարորդ, որ մեծ թիվ է: 2017թ. հինգ ամսվա ընթացքում վարորդական իրավունքից զրկման (խախտումը կրկնակի էր)՝ 15, առանց պետհամարանիշի՝ 3, առանց ԱՊՊԱ կտրոնի՝ 32, թաղանթապատ ապակիներով՝ 98, արագության գերազանցման՝ 1207, ընդհանուր առմամբ՝ 11472 տարաբնույթ խախտումների արձանագրություն է կազմվել:

«Հիմնականում վթարները տեղի են ունենում արագության գերազանցման (մոտ 90 տոկոս), ոչ սթափ վիճակում մեքենան վարելու հետեւանքով: Նշեմ, որ կին վարորդների թվի ավելացումն էական ազդեցություն չի ունեցել պատահարների թվի վրա, ընդհակառակը՝ տարեցտարի նրանք ավելի են կատարելագործել իրենց վարորդական հմտությունները՝ դառնալով կարգապահ, տիրապետելով ճանապարհային երթեւեկության կանոններին, ինչի շնորհիվ խուսափում են անցանկալի հետեւանքներից», – նշեց Ա.Շաղոյանը:

Կին վարորդների խախտումների մասին խոսելիս ոստիկանության 6-րդ վաշտի 2-րդ դասակի (Սյունիքի մարզ) հրամանատար, փոխգնդապետ Արթուր Ոսկանյանը փաստեց, որ ե՛ւ արձանագրում են, ե՛ւ ներում՝ կախված խախտման բնույթից:

Արագաչափերի, տեսանկարահանող սարքերի՝ բարձր վթարայնություն ունեցող մասերում տեղադրումն էական նշանակություն է ունեցել վթարների թվի կրճատման վրա, բայց մյուս հատվածներում հակառակը՝ ավելացել է: *«Այնտեղ, որտեղ տեղադրված են համապատասխան սարքերը, միանշանակ ճանապարհային երթեւեկությունը զգալիորեն կարգավորվել է, բայց պետք է գիտակցենք, որ կարգապահ վարելու համար պարտադիր չէ տեսախցիկի առկայությունը: Մեզանում երթեւեկության կուլտուրան ավելի պետք է բարձրացնենք, ուրախությամբ նշեմ, որ աստիճանաբար այդ առումով զգալի առաջընթաց ենք ապրում. մեր երթեւեկության մասնակիցները, նաեւ հետիոտները հետեւում են կանոններին: Ի դեպ, նվազել է նաեւ հետիոտնային վրաերթերի թիվը: Հավելեմ՝ նմանատիպ սարքերի ավելացում մեր վաշտի տարածքում առայժմ չի նախատեսվում»,* – նշեց ոստիկանության փոխգնդապետ Ա.Շաղոյանը:

Նախորդ տարի 6-րդ վաշտի սպասարկման տարածքում զոհերի թիվը 18-ով նվազել է, ինչի շնորհիվ, Անդրանիկ Շաղոյանի կարծիքով, այդքան ընտանիքի լույսը վառ է մնացել: *«Ոչ մեկս էլ ապահովագրված չենք վթարներից, հասնել մի հանգրվան, որ պատահարներ ընդհանրապես չլինեն, հնարավոր չէ: Բայց բարձրացնելով մեր գիտակցական մակարդակը՝ հնարավորինս կնվազեցնենք դրանց թիվը. մեքենան ոչ թե շքեղություն է, այլ՝ անհրաժեշտություն, պարզապես փոխադրամիջոց»,* – նշեց Ա.Շաղոյանը:

Հունիսի 23-ին Կապանում տեղի ունեցած ողբերգական դեպքի մասին Ա.Շաղոյանը նշեց, որ այն ճանապարհատրանսպորտային պատահար չի համարվում, քանի որ վարորդը մահացել է մինչ պատահարը: *«Կոնկրետ այս դեպքում վարորդը մեքենան վարելիս հանկարծամահ է եղել, ինչից հետո բախվել է Մ.Ստեփանյան փողոցի պատնեշին: Առհասարակ եթե վարորդական իրավունք ստանալուց հետո վարորդը հիվանդանում է, մեզ համապատասխան գրություն են ուղարկում եւ առգրավում ենք նրա վարորդական իրավունքը: Նման դեպքեր եղել են, իսկ հաշմանդամության որոշակի կարգ ունեցողներին թույլատրվում է վարորդական իրավունք ստանալ»*, - պարզաբանեց վաշտի հրամանատարը:

Անդրանիկ Շաղոյանի խոսքով՝ տարածքի ծավալը, աշխարհագրական դիրքը, ազգաբնակչության թիվը հաշվի առնելով, բնականաբար, Սյունիքի մարզում ավելի շատ են տրանսպորտային միջոցները, քան Վայոց ձորում: Եթե Վայոց ձորում կա մոտ 12.5 հազար տրանսպորտային միջոց, ապա Սյունիքի մարզում կրկնակի, եռակի ավելին է:

Գաղտնիք չէ, որ հասարակության մեջ շարունակվում են խոսակցություններ այն մասին, որ ճանապարհային տեսուչներից ոմանք խախտումը չարձանագրելու համար կաշառք են վերցնում: Այս դիտարկմանն ի պատասխան Անդրանիկ Շաղոյանը նշեց. *«Խախտումն արձանագրելու դեպքում վճարելու երկու տարբերակ ունենք՝ կանխիկ եւ բանկով՝ 30 օրվա ընթացքում: Վարորդը կարող է տեղում վճարել տուգանքը եւ ստանալ համապատասխան կտրոն, ինչը դիմացից նայողը կարող է որակել որպես կաշառք: Բայց չեմ բացառում նմանատիպ արատավոր դեպքերի առկայությունը, ուստի կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու համար ճանապարհային ոստիկաններին ամրակցվել են տեսախցիկներ: Վարորդները կփաստեն, որ դրանց շնորհիվ բավականին նվազել են կոռուպցիոն դեպքերը»:*

Մեկ այլ նկատառում եւս. հաճախ ճանապարհային ոստիկանները խախտում կատարող վարորդների հետ կոնֆլիկտներ են ունենում, քանի որ վերջիններս չեն ընդունում իրենց կատարած խախտումը: Ա.Շաղոյանի խոսքով՝ եթե բոլոր վարորդներն իմանան իրենց իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքն ավելի հեշտ կկազմակերպվի: Ցավոք, նմանատիպ միջադեպեր լինում են, բայց համատարած բնույթ չեն ստանում, քանի որ «դեռ կան վարորդներ, ովքեր զիջելու սովոր չեն, իսկ ճանապարհային անվտանգության ապահովման համար դա կարեւոր նախապայման է»: Ասվածին որպես հավելում Արթուր Ոսկանյանը հավելեց, որ ներկայիս պայմաններում ոստիկանությունը ամեն ինչ անելու է, որպեսզի ճանապարհային պատահարներ չլինեն, ինչի համար անհրաժեշտ է ոստիկանների եւ վարորդների համատեղ աշխատանքը:

էջ 4

Չորրորդ բանակային կորպուսի երկու փասնամյակը

Հոբելյանական զորահանդեսին հրավիրված էր նաեւ «Սյունյաց երկիրը»

էջ 1

ից մեկը:

Զորահանդեսին ներկա էին պաշտպանության նախարարի տեղակալ Արա Նազարյանը, գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ, գեներալ-մայոր Օնիկ Գասպարյանը, Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, չորրորդ բանակային կորպուսի նախկին հրամանատարներ, գեներալ-լեյտենանտ Արշալույս Փայտյանը, գեներալ-մայորներ Անդրանիկ Մակարյանը, Պողոս Պողոսյանը, այլ բարձրաստիճան զինվորականներ: Մինչեւ զինվորական շքերթը սկսելը ռազմահայրենասիրական երգերով հանդես եկավ ՀՀ պաշտպանության նախարարության «Զորական» անսամբլը: Փողային նվագախմբի հնչյունների ներքո հրապարակ բերվեց ՀՀ զինված ուժերի չորրորդ բանակային կորպուսի մարտական դրոշը:

Զորամիավորման հիշարժան տարեդարձի առթիվ շնորհավորանքի խոսքով ներկաներին դիմեց կորպուսի հրամանատար, գնդապետ Վալերի Քոչարյանը՝ ներկայացնելով զորամիավորման հիմնադրումն ու մարտական ուղին.

«Հիշարժան օր է այսօր, ոչ միայն մեզ, այլ նաեւ ՀՀ զինված ուժերի համար ընդհանրապես, քանզի նշվում է մեր զինված ուժերի զորամիավորումներից մեկի՝ չորրորդ բանակային կորպուսի կազմավորման 20-րդ տարեդարձը: Այս միջոցառման նպատակը հայրենիքի եւ ժողովրդի պաշտպանության համար կազմավորված մեր զորամիավորման մեծարումն է եւ նրա օրինակով ժամանակակիցների դաստիարակումը: Բանակային կորպուսի կազմավորման տարեգրությունը սկսվել է դեռեւս 1989-90-ական թվականներին, երբ Արցախյան շարժմանը զուգընթաց Արարատյան դաշտի եւ մայրաքաղաք Երեւանի դարպասները, Վայոց ձորի եւ Սյունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերը հակառակորդի ոտնձգություններից պաշտպանելու համար ստեղծվեցին ինքնապաշտպանական վաշտեր՝ միավորվելով հատուկ գնդի կազմում: ՀՀ պաշտպանության նախարարության կազմավորման սկզբում՝ 1992 թվականին, վերոնշյալ վաշտերը կազմավորվեցին որպես սահմանապահ զորքերի վարչության պարետատներ: Մարտական գործողությունների ընթացքում այդ պարետատները վերակազմավորվեցին որպես մոտոհրաձգային զորամասեր եւ ստորաբաժանումներ՝ համապատասխանաբար Մեղրու եւ Սիսիանի պարետատները՝ Պաշտպանության նախարարության երկրորդ առանձին մոտոհրաձգային գումարտակի կազմում:

Այդ ընթացքում վերոնշյալ զորամասերը մասնակցել են Հայաստանի Հանրապետության արեւելյան սահմանների պաշտպանությանը եւ Մարտակերտի, Լաչինի, Քարվաճառի, Զանգեզուրի, Ֆիզուլիի, Աղդամի, Կուբաթլիի, Հորադիզի ազատագրման մարտերին: Բանակային կորպուսը կազմավորվեց 1997 թվականի հուլիսին: Նրա կայացման գործում արժանի ներդրում ունեցան բանակային կորպուսի առաջին հրամանատար, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովը, որը շարունակեցին կորպուսի հրամանատարներ, գեներալ-լեյտենանտ Մարտին Կարապետյանը, գեներալ-մայորներ Սեյրան Սարոյանը, գեներալ-լեյտենանտ Արշալույս Փայտյանը, գեներալ-լեյտենանտ Վալերի Գրիգորյանը, գեներալ-մայորներ Կամո Քոչունցը, Պողոս Պողոսյանը, Անդրանիկ Մակարյանը»:

Բանախոսը մասնավորապես հայտնեց, որ 2008-2009 ուսումնական տարվա ծառայողական եւ մարտական գործունեության արդյունքներով չորրորդ բանակային կորպուսը երկու անգամ պարգեւատրվել է ՀՀ զինված ուժերի «Լավագույն զորամիավորում» պատվո դրոշով եւ պաշտպանության նախարարության կոլեգիայի փոխանցիկ դրոշով: Հրամանատարը նաեւ փոխանցեց, որ հասարակության տարբեր շերտերի հետ համագործակցության շնորհիվ է բանակային կորպուսը հասել նշանակալի հաջողությունների: Ողջերթի իր խոսքում ավարտին Վ.Քոչարյանը վկայակոչեց մեծն Գարեգին Նժդեհի խոսքերը «Թշնամուն չպիտի պարտվի այն զինվորը, որ անմնացորդ սիրում է իր հայրենի հողը, հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ եւ մեռնում նրա պակասից»:

Չորրորդ բանակային կորպուսի 20-րդ տարեդարձի առթիվ բարեմաղթանքի խոսքերով հանդես եկան Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, կորպուսի նախկին հրամանատար, Հայաստանում ռուս-հայկական զորքերի միացյալ խմբավորման հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը: Երկրապահ կամավորականների միության վարչության նախագահ, Արցախի հերոս Մանվել Գրիգորյանի շնորհավորական ուղերձը ներկայացրեց ԵԿՄ վարչության փոխնախագահ Օհան Գեւորգյանը:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի, չորրորդ բանակային կորպուսի հրամանատարի եւ ԵԿՄ նախագահ, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի կողմից մի ստվար խումբ զինծառայողներ արժանացան խրախուսանքների (մեդալներ, պատվոգրեր, դրամական պարգեւներ, անվանական նվերներ):

Այնուհետեւ ողջերթի խոսքով հանդես եկավ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ-մայոր Օնիկ Գասպարյանը՝ համոզմունք հայտնելով, որ առաջիկայում եւս չորրորդ բանակային կորպուսը գնդապետ Վալերի Քոչարյանի հրամանատարությամբ կունենա նոր ձեռքբերումներ:

Պահպանիչ աղոթքով հանդես եկավ Վայոց ձորի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Աբրահամ Մկրտչյանը:

Զորահանդեսի ավարտին իրենց մարտարվեստը ցուցադրեցին հետախուզական վաշտի մարտիկները, ելույթ ունեցան գեղարվեստական ինքնագործունեության խմբեր:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հարցազրույց Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, գնդապետ Սենոր Հասրաթյանի հետ

էջ 1

գործելաոճ է մեր պաշտպանության ճիշտ կազմակերպման տեսանկյունից:

– Կարծես թե ինֆորմացիոն պատերազմը նոր մակարդակի է հասել՝ ներառելով տեղեկատվական տեխնոլոգիաները:

– Արդի աշխարհաքաղաքական գործընթացների դինամիկայից պարզ երեւում է, որ 21-րդ դարի, եթե ոչ թիվ մեկ, ապա գոնե կարեւորագույն զենքերից մեկը տեղեկատվությունն է՝ իր բաղադրիչներով հանդերձ: Եթե ուշադիր հետեւեք երկրագնդի տարբեր հատվածներում տեղ գտնող զարգացումներին, դրանց բնույթին ու հաջորդականությանը, ապա կհամոզվեք, որ ամեն ինչ սկսվում է խոսքից, դրա օգտագործման ձեւից ու բովանդակությունից: Տեղեկատվության ճիշտ ու նպատակային կիրառումն, առավել քան կարեւոր է այն երկրների համար, որոնք գտնվում են ոչ պատերազմ, ոչ խաղաղություն իրավիճակում: Մեր տարածաշրջանն աշխարհի հենց այդ կետերից մեկն է, ինչն էլ ենթադրում է հաշվարկված գործողությունների համալիր տեղեկատվական պայքարի ոլորտում:

– Եթե օբյեկտիվ լինենք, տեղեկատվական պատերազմում ուժերի հարաբերակցությունն ո՞ւմ օգտին է:

– Հարաբերակցությունը միանշանակ հայկական կողմի օգտին է, եւ սա ոչ միայն այն պատճառով, որ մեր տեղեկատվական համակարգը լավ է աշխատում, այլ նաեւ պայմանավորված այն հանգամանքով, որ ի տարբերություն ադրբեջանական կողմի, մենք առավել օբյեկտիվ եւ իրականությանը հնարավորինս համահունչ ենք ներկայացնում իրողությունները: Ասվածը չընդունեք որպես դեկլարատիվ հայտարարություն: Իրողությունն այն է, որ անցած 23 տարիների ընթացքում Ադրբեջանը չկարողացավ նավթադոլարներով, խավիարով համաշխարհային հանրությանը երբեւէ համոզել իր ճշմարտացիության մեջ: Այսօր, անգամ նրան առերես պաշտպանողները ներքուստ համոզված եւ գիտակցում են, թե որ կողմում է արդարությունը: Եվ հենց դա է պատճառը, որ միջազգային համապատասխան կազմակերպությունները ձեռնպահ են մնում, քաղաքական նկատառումներից ելնելով, գնալ որեւէ կտրուկ քայլի: Այնպես որ, գրագետ տեղեկատվական քաղաքականության շնորհիվ է նաեւ, որ միջազգային հանրությունը հստակ պատկերացնում է հիմնախնդրի էությունը եւ, ըստ այդմ, գործում բավականին զգույշ…

– Մեր տպավորությունն այն է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն անընդհատ հավասարության նշան են դնում հակամարտող երկու կողմի միջեւ. վերջերս մի բացառություն արվեց:

– Ես կասեի, որ նման գործելաոճը բխում է հակամարտությունների խաղաղ կարգավորմամբ զբաղված յուրաքանչյուր միջազգային կառույցի համար սահմանված կանոնակարգային պահանջներից: Ակնհայտ է, որ հակամարտող կողմերի միջեւ առկա հակադրությունները հարթելուն ուղղված անհասցե հայտարարությունների մարտավարությունը դիվանագիտության նախընտրելի մեթոդն է, որն էլ կիրառում է ԵԱՀԿ Մինսկի խումբը: Սակայն տվյալ մեթոդի կիրառման ընթացքում հնարավոր է արվեն նաեւ այնպիսի հայտարարություններ, որոնք առաջին հայացքից կարծես թե չունեն հասցեական մեսիջներ, բայց ենթատեքստում կոնկրետ հղումներ են պարունակում: Ի դեպ, փորձը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում դիվանագիտական լեզվով արված նման հղումներն ավելի լուրջ հետեւանքներ կարող են թողնել, քան բացահայտ հասցեական մեսիջները:

– Դուք հանգամանալից ներկայացրիք ադրբեջանական ռազմատեղեկատվական քարոզչությունը, որեւէ բան կավելացնեի՞ք ասվածին:

– Կցանկանայի համառոտ անդրադառնալ եւս մեկ հարցի, որը բավականին հաճախ է շոշափվում իմ հայ գործընկերների կողմից: Խոսքը բանակի մամուլի ծառայության գործառույթներին է վերաբերում: Ոմանց կարծիքով բանակային տվյալ համակարգը կոչված է ապահովելու հանրային իրազեկվածությունը զինված ուժերի մասին եւ այն պարտավոր է ականջալուր լինել ցանկացած լրատվամիջոցի ցանկացած հարցի: Թերեւս ոմանց մոտ ձեւավորված հենց այս թյուրըմբռնումն է պատճառը, որ հաճախ հեռախոսազանգեր եմ ստանում ռազմական գատնիք պարունակող ամենատարբեր հարցերի շուրջ: Հաշվի առնելով այս հանգամաքը եւ ընձեռված հնարավորությունը, կցանկանայի ներկայացնել հետեւյալը. ռազմական գերատեսչության մամուլի ծառայության առաջնահերթ խնդիրն է մշակել եւ իրականացնել համակարգված եւ նպատակային տեղեկատվական քաղաքականություն, այլ ոչ թե, ինչպես որոշ լրատվամիջոցների ներկայացուցիչներն են պնդում, իրենց միջոցով ապահովել հանրային տեղեկացվածությունը բանակային գործընթացների շուրջ: Ռազմական տեղեկատվությունը պաշտպանական համակարգի կարեւոր բաղադրիչներից է, որն ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմական ժամանակաշրջանում ունի ռազմական նշանակության հարցերի լուծման այն գործառույթներն, ինչպիսիք ունեն բանակային մյուս ծառայությունները, այն է՝ ռազմական գաղտնիքի պահպանման հրամայականով ապահովել զինված ուժերի առջեւ դրված խնդիրների լիարժեք լուծումը: Հանրային իրազեկման գործառույթը բանակի մամուլի ծառայության կողմից իրականացվող տեղեկատվական քաղաքականության ուղղություններից մեկն է, որը պետք է կյանքի կոչվի բացառապես առաջադրված խնդրի լիարժեք կատարման առաջնահերթությունից ելնելով, այլ ոչ թե սոսկ լրատվություն տարածելու անորոշ նպատակով:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ
27.06.2017թ.

Ասված պահապան դիրքապահ զինվորին

Ապրիլյան ռազմական գործողություններից հետո չէինք եղել դիրքապահ զինվորների մոտ: Այս անգամ նախ եղանք Արցախի պաշտպանության բանակի կենտրոնական ենթակայության զորամասերից մեկում, այնուհետեւ արեւելյան ուղղությամբ տեղակայված մարտական դիրքում: «Եթե մենք կորցնենք Արցախը, կշրջենք հայոց պատմության վերջին էջը», - Արցախյան ազատագրական շարժման նվիրյալ եւ Արցախի հերոս Մոնթե Մելքոնյանի մարգարեական խոսքերն են, որ փակցված է գեղնատնակի վրա: Դիրքապահ մարտիկները լրագրողներիս զուսպ ու հանգիստ են ընդունում. ոչ մի ձեւականություն: Այստեղ յուրաքանչյուրը հստակ գիտի իր պարտականությունը:

Գումարտակի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, մարտական դիրքերի պատասխանատու էդգար Ղարիբյանը շփման գծի այդ հատվածի օպերատիվ վիճակը ներկայացնելիս մանրամասների մեջ չի ընկնում. այդպես է պահանջում ռազմական գործը: Հընթացս տեղեկանում ենք, որ նախորդ տարվա ապրիլից հետո զգալիորեն բարելավվել են տեխնիկական միջոցները, սպառազինությունը, մանավանդ առաջնագծում կախված պահածոյի դատարկ տուփերը, որ ծառայում էին որպես ազդանշանային համակարգ, դուրս են եկել գործածությունից եւ արդեն ժանգոտած իրենց անիմաստ գոյությունն են շարունակում մետաղալարերի վրա:

Ռազմական գաղտնիքը՝ ռազմական գաղտնիք, բայց չէինք կարող չհետաքրքվել դիրքապահների կենցաղով, առօրյայով, ծառայությամբ:

Վաշտի հրամանատար, կապիտան Ռոման Հարությունյանը 2011-ին ավարտել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը (2016 թվականից՝ ռազմական համալսարան): Մի քանի անգամ վերապատրաստման դասընթացներ է անցել բուհի սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոնում: Գումարտակում հմուտ հրամանատարի համարում ունի եւ նրանից, նախեւառաջ, ցանկանում ենք իմանալ, թե ինչպես են վերաբերվում Բաքվի ռազմատենչ հայտարարություններին, պարզվում է՝ ոչ մի նշանակություն չեն տալիս, ուղղակի վստահելով վաշտի մարտիկների զինական ուժին, պատրաստ են հակահարված տալու, ինչպես ապրիլյան առճակատման ժամանակ (ի դեպ, մեզ փոխանցեցին, որ Ադրբեջանի հետ մենք հարատեւ պատերազմի մեջ ենք, իսկ 2016 թվականի ապրիլին տեղի ունեցածը ռազմական առճակատում էր): Ընդ որում՝ այդ ժամանակ այս ուղղության վրա զոհեր եւ վիրավորներ չեն եղել: Գումարտակի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ էդգար Ղարիբյանը մեզ նվիրեց մի լուսանկար, որում ապրիլյան առճակատման ակտիվ մասնակիցներն են՝ գումարտակի հրամանատարը եւ չորս սերժանտ:

– Կարող է նրանց սպառնալիքներն ինչ-ինչ ազդեցություն ունեն զավակին բանակ ճանապարհող ծնողի վրա, բայց դիրքում կանգնած զինվորի համար դա քամի տատանելու նման մի բան է: Մեր զինվորներին նման քարոզներով ոչ միայն չես վախեցնի, այլ փոքր-ինչ չես շեղի նրա ուշադրությունն իր պարտականությունները կատարելուց, - վստահեցնում է մեր զրուցակիցը՝ Ռոման Հարությունյանը:

Հրամանատարը նաեւ ծնող է, ի՞նչ կփոխանցի զինվորների ծնողներին: *«Ոչ միայն զինվորներին, այլ բանակ զորակոչվող տղաների ուսուցիչներին կխնդրեի, որ հայոց պատմությունը նրանց լավ սովորեցնեն, որովհետեւ մեր պատմությունը սերտած զինվորը գիտի, թե ինչի համար է եկել այստեղ: Եվ նրա համար է դյուրին լինում ծառայելը, մեզ համար՝ ռազմական գործը նրանց սովորեցնելը: Այլապես նախ նրանց գիտակցությանն ենք հասցնում, թե ինչի համար է այստեղ, ինչ պիտի անի, հետո նոր սկսում ռազմական գործն ուսուցանել: Եթե դպրոցում աշակերտի գիտակցության մեջ սերմանեն այն գաղափարը, որ դպրոցն ավարտելուց հետո գնալու է իր հողը պաշտպանելու, այդ դեպքում մեզ համար ավելի հեշտ է լինում նախկին դպրոցականից զինվոր պատրաստել»:*

Իսկ նորակոչիկների ընդհանուր կրթական մակարդակը բավարարո՞ւմ է. *«Այն, ինչ սովորեցնում ենք, նորմալ տեղ է հասնում»:*

Սերժանտ Հովհաննես Մանուկյանի ատլետիկ կազմվածքը «մատնում» է սպորտային անցյալը: Ավարտել է օլիմպիական պետական մանկավարժական քոլեջը, մարզիչ-մանկավարժի որակավորում ունի,

էջ 4

Կենսագրություն

Սենոր Ռաֆայելի Հասրաթյան. ծնվել է 1963թ. հուլիսի 16-ին ԼՂՀ Մարտունու շրջանի Կարմիր շուկա ավանում: 1988-ին ավարտել է Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Նույն թվականին աշխատանքի է անցել ԼՂ հեռուստատեսության եւ ռադիոհաղորդումների պետական կոմիտեում: Լրագրողական աշխատանքին զուգահեռ, 1989-ից մինչեւ 1991 թվականը դասավանդել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում: 1993թ. սեպտեմբերի 1-ից ծառայության է անցել ԼՂՀ Պաշտպանության բանակում, նախ՝ որպես ՊԲ զինանձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի լրատվական բաժանմունքի, իսկ 1994-1995թթ..՝ ՊԲ լրատվական ծառայության պետ: Այդ ընթացքում հիմնադրել է ՊԲ «Գոյամարտ» զինվորական հեռուստածրագիրը: 1995-ից մինչեւ 1999 թվականը զբաղեցրել է ԼՂՀ հեռուստատեսության եւ ռադիոհաղորդումների վարչության պետի տեղակալի պաշտոնը՝ միաժամանակ կատարելով ՀՀ ՊՆ «Զինուժ» հեռուստածրագրի Արցախի թղթակցական կետի պետի պարտականությունները: 2001թ. հունվարին նշանակվել է ՊԲ լրատվության եւ քարոզչության բաժնի պետ:

Հեղինակ է «Ներշնչանքի ավազան» բանաստեղծությունների ժողովածուի (1991թ.), «Գոյամարտ» (հայերեն, ռուսերեն, 1998թ.), «Ղարաբաղյան պատերազմ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն, 2001թ.), «Մարտանցում» (2001թ.), «Գեներալ Իվանյան» (հայերեն, ռուսերեն, 2004թ.), «Գաղափարի զինվորը» (հայերեն, անգլերեն, 2006թ.), «Մենք՝ հայերս…» (2007թ.), «ՊԲ պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում» (2008թ.), «ՊԲ զորատեսակները, ծառայությունները եւ առանձին ստորաբաժանումները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում» (2010թ.), «Ոսկե արծիվ շքանշանի ասպետները» (2011թ.), «ԼՂՀ պաշտպանության բանակ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն, 2012թ.), «Հաղթող բանակի զորահանդեսը» (հայերեն, ռուսերեն, անգլերեն, 2013թ.), «Վարանդայի հովտի պաշտպանները» (2014թ.), «Հայացք դրսից. օտարները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասին» (հայերեն, ռուսերեն, անգլերեն, 2016թ.) մենագրությունների, ռազմական թեմաներով տասնյակ հոդվածների ու տեսաֆիլմերի:

Պարգեւատրվել է ՀՀ «Արիություն» (2002թ.), «Մայրական երախտագիտություն» (2003թ.), ԼՂՀ «Արիության համար» (2004թ.), «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի (2004թ.), «Գարեգին Նժդեհ» (2004թ.), «Դրաստամատ Կանայան» (2006թ.), «Անբասիր ծառայության համար» 2-րդ աստիճանի (2007թ.), ՀՀ «Մարտական ծառայություն» (2008թ.), «Զինվոր Հայրենյաց» (2011թ.), «ՀՀ Զինված ուժերի 20 տարի» (2011թ.), «Հայրենյաց պաշտպան» (2011թ.), «Անբասիր ծառայության համար» 3-րդ աստիճանի (2012թ.), «Երախտագիտություն» (2013թ.), «Անբասիր ծառայության համար» 4-րդ աստիճանի պետական ու գերատեսչական մեդալներով:

Ասփված պահապան դիրքապահ զինվորին

էջ 3

ընբշամարտիկ է, հանրապետական մրցումներում հաղթող է ճանաչվել, միջազգային մրցաշարերից մրցանակներով վերադարձել, մեկ տարի է՝ ինչ ծառայում է: «Ի՞նչ է տվել զինծառայությունը» հարցին, առանց մտորելու պատասխանում է՝ սովորեցրել է կարոտին դիմանալ: Տանը եղբայր ունի, ով ձմռանը զորակոչվելու է հայկական բանակ:

Գումարտակի շտաբի պետ մայոր Հակոբ Մարտիրոսյանից հետաքրքվում ենք, թե ֆիզիկական ի՞նչ պատրաստականությամբ են նորակոչիկները համալրում բանակի շարքերը: *«Քչերն են բավարարում մեր պահանջները, - պատասխանում է, - դա նրանից է, որ պատանիները մինչեւ բանակ զորակոչվելը ֆիզիկական աշխատանքով ու սպորտով չեն զբաղվում, չեն մարզում իրենց մարմինը, այստեղ ջանում ենք լրացնել այդ բացը, ինչին նպաստում են սպորտմասսայական միջոցառումները»: Հակոբը Մեղրուց է, փորձում ենք իմանալ, թե ե՞րբ է վերջին անգամ եղել տանը: Պարզվում է՝ երկու օր առաջ: «Ինչպե՞ս տեսաք Մեղրին»,* - հարցնում եմ: *«Կարեւորն այն է, որ կարկուտը չի խփել»,* - ակնարկում է, որ մեղրեցու հիմնական ապրուստն արեւահամ բերքն ու բարիքն են:

Սերժանտ Նվեր Մովսիսյանի տեղեկացմամբ, ինչ դիրքերում են, կրակոցներ չեն եղել: Իսկ ինչպե՞ս են վերաբերվում մեր կորուստների մասին տեղեկատվությանը, երբ ժամկետային զինվոր է զոհվում: Շատ մեծ ցավ են ապրում, բայց եւ ավելի ուշադիր եւ զգույշ են դառնում: Իսկ երբ զինվորին հիշեցնում ենք, որ իր ծննդավայրը՝ Դիլիջանը զով եղանակ ունի, ասում է, որ արդեն հարմարվել է շոգին:

Խորհրդային տարիներին սովետական բանակում ծառայածներիս համար հարազատների հետ շփման միակ միջոցը նամակագրությունն էր: Ե՛վ ծնողի համար էր նամակ ստանալը հաճելի իրադարձություն, ե՛ւ զինվորի: Հիմա նամակ գրելու մշակույթն աստիճանաբար մոռացվում է: Մերօրյա զինվորներն ինչպե՞ս են հաղորդակցվում իրենց ծնողների, մտերիմների հետ: Անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով գումարտակի հրամանատարի տեղակալը հայտնում է, որ խնդիրը մեկ ամիս առաջ վերջնականապես լուծվել է. զորամասում «սկայպ» է տեղադրված: Դիրքերից իջնելուց հետո զինվորներին հնարավորություն է ընձեռվում անմիջականորեն շփվել իրենց հարազատների հետ:

Զինվորի հետ զրուցելիս, խոսակցությունը թեքվում էր դեպի 2016-ի ռազմական գործողությունները, նշում էին, թե այդ օրերին ժողովուրդը որքան միակամ էր, իսկ նրանցից մեկն իր միտքը կես-կատակ, կես-լուրջ այսպես ձեւակերպեց. *«Հայաստանն այն երկիրն է, որտեղից խաղաղ ժամանակ արտագաղթում են, պատերազմի ժամանակ՝ ներգաղթում»:*

Հրաժեշտ ենք տալիս առաջնագծում կանգնած զինվորներին՝ հիշելով բոլոր հայերի սրտից բխած օրհնանքը՝ Աստված պահապան դիրքապահ հայ զինվորին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մարտական հերթապահությունը՝ սրբազան պարտականություն

Հունիսի 27-ին այցելելով Արցախի՝ արեւելյան ուղղությամբ տեղակայված մարտական դիրքերից մեկը, գտնե ինձ համար եւս մեկ անգամ ապացուցվեց ժողովրդի հայտնի ասացվածքի ճշմարտացիությունը. «Ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան հազար անգամ լսել»: Մարտական հերթապահությունը պատվով իրականացնող յուրաքանչյուր զինծառայող ապրում է մեկ գիտակցությամբ՝ այստեղ կանգնած նա պաշտպանում է իր հայրենի սահմանների անվտանգությունը, իր ժողովրդի ազատ եւ անկախ ապրելու իրավունքը: Թվում է՝ դիրքերում կանգնած 18-20 տարեկան զինվորին ապրիլյան դեպքերը պետք է ընկճեին, բայց, ինչպես փաստեցին մեր այցելության պահին մարտական հերթապահություն իրականացնող ժամկետային զինծառայողները, հակառակ երեւույթն է տեղի ունեցել. դրանից հետո նրանք ավելի գիտակցաբար են մոտենում ծառայությանն ու իրենց պարտականություններին:

Մեկ տարվա զինծառայող, շարքային Արթուր Մարգարյանը խոստովանեց, որ ծառայությունից հետո ամբողջությամբ փոխվեց իր մտահորիզոնը. *«Մինչ ծառայությունը բոլորովին այլ էին պատկերացումներս դրա ընթացքի վերաբերյալ, բայց հիմա այն դրականորեն փոխվել է՝ թե՛ մարտական դիրքի իրավիճակի, թե՛ հրամանատարական կազմի եւ թե՛ ծառայակիցներիս հետ հարաբերությունների առումով: Հատկապես մարտական հերթապահության ժամանակ ավելի է ջերմանում մեր շփումը, ավելի լավ ենք միմյանց ճանաչում եւ հասկանում, կարելի է ասել, դառնում ենք մեկ ընտանիք»:*

Ապրիլյան առճակատման բովով անցած շարքային Արթուր Բաղալյանը, ում ծառայության ավարտին մնում է ընդամենը 23 օր (խմբ.՝ մեր այցելության պահին), նշում է, որ, բնականաբար, այդ օրերի սկզբնական շրջանում անհանգստություն կար, բայց դրանից հետո ծառայության հանդեպ իրենց վերաբերմունքն ավելի լրջացավ: *«Զինծառայության մեկնող նորակոչիկներին կասեմ, որ չվախենան ծառայությունից, մարտական դիրքում հերթապահելուց. վախենալու ոչինչ չկա»,* - խորհուրդ տվեց Արթուր Բաղալյանը, ով հետագայում պայմանագրային զինծառայող դառնալու հավանականության հարցին պատասխանեց՝ երեւի թե ոչ, բայց կյանքը ցույց կտա:

ԱՆԴՐԱՆԻԿ ՇԱՂՈՅԱՆ. «Ջե՛րծ մնացեք մեքենան ոչ սթափ վարելուց եւ արագության գերազանցումից. չէ՞ որ վայրկյանների ընթացքում ճակատագրեր կարող են խաթարվել»

էջ 2

նյանը նշեց. *«Ոչ մի խախտում կատարող վարորդ էլ չի ցանկանում, որ տուգանեն: Հատկապես վերջին շրջանում նրանց իրավունքների եւ պարտականությունների հաճախակի լուսաբանումը նպաստում է խախտումների նվազեցմանը, բայց էլի կան տարբեր խախտումներ կատարող, տարբեր բնավորության ու մտածելակերպի տեր վարորդներ»:*

Չէինք կարող չարձանագրել նաեւ, որ հաճախ մեծահարուստ վարորդները, իրենց արտոնյալ զգալով, թույլ են տալիս կոպիտ խախտումներ, որոնց վրա ճանապարհային տեսուչներն աչք են փակում: Փոխարենը լինում են դեպքեր, երբ կանգնեցնում են առավել հին մակնիշի մեքենաների վարորդներին, իսկ այդ նույն ժամանակահատվածում նրանց կողքով անցնում են «արտոնյալները»՝ առավել լուրջ խախտում թույլ տալով: *«Նախ՝ ճանապարհային ոստիկանն իրավունք չունի միաժամանակ երկու մեքենա կանգնեցնել: Նախկին կարծրատիպերը պետք է վերացվեն, քանի որ իրականում անպատժելի վարորդ չկա, բոլորն օրենքի առաջ հավասար են: Իհարկե, լկտի պահվածքով վարորդներ դեռեւս կան, ովքեր դաստիարակություն չեն ստացել եւ դժվար է նրանց կարգուկանոն պարտադրելը: Բայց նաեւ չեմ կարող բացառել, որ հայկական ձեւը մեզանում դեռ կա»,* – պարզաբանեց վաշտի հրամանատարը:

Ամռան տարեշրջանում, ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի ցուցումի համաձայն, գյուղատնտեսական ապրանքներ տեղափոխող մեքենաների վարորդներին թեթեւ խախտումների դեպքում ընդառաջում են, այսպես ասած՝ աչք են փակում դրանց վրա. նպատակը գյուղացուն աջակցելն է: Ինչ վերաբերում է մանր եւ եղերաւոր անասունների՝ արոտավայրեր տեղափոխվելուն, ապա, Ա.Շաղոյանի խոսքով, այն պետք է կազմակերպել օրվա լուսավոր պահերին՝ համապատասխան թույլտվության պայմաններում:

Հետաքրքիր էր իմանալ նաեւ պարսիկ վարորդների կարգապահության մասին. Ա.Շաղոյանի խոսքով՝ հիմնականում կարգապահ են, իհարկե, խախտումներ էլ են թույլ տալիս, բայց հաշվի առնելով, որ հյուր են մեր երկրում եւ խիստ պատժելու դեպքում կարող ենք խոչընդոտել զբոսաշրջության զարգացմանը, երբեմն ճանապարհային ոստիկաններն ընդառաջում են: Կոպիտ խախտումների դեպքում պատժվում են մեր երկրի օրենքներով:

Վերջերս Կապանում տեղադրված լուսացույցներից խոսելիս ոստիկանության փոխգնդապետը նշեց, որ առհասարակ դրանք տեղադրվում են համայնքային միջոցներով. *«Բազմիցս միջնորդագրեր ենք ներկայացրել համայնքապետարաններ, որ ֆինանսական միջոցներ լինելու դեպքում խաչմերուկներում տեղադրվեն լուսացույցներ, բայց, ինչպես գիտենք, դրանք թանկ հաճույք են, եւ ոչ բոլոր համայնքները նման հնարավորություն ունեն: Մեր խնդիրներից մեկն էլ ճանապարհային երթեւեկության նշանների հետ է կապված: Ամիսը մեկ-երկու անգամ համայնքապետարաններ միջնորդագրեր ենք ուղարկում, որ համայնքի տարածքում սեփական միջոցներով կահավորեն ճանապարհային երթեւեկության նշանները, ինչպես նաեւ գծանշումները: Բարեբախտաբար, մեր տարածաշրջանի միջպետական ճանապարհների գծանշումները բավարար մակարդակով կատարված են: Լավ կլիներ, որ միջպետական ճանապարհներին ավելանային արգելապատնեշները, քանի որ Սյունիքի մարզի ճանապարհները հիմնականում անցնում են ձորերով, կիրճերով: Սա ավելի կնպաստեր անցանկալի միջադեպերից խուսափելուն եւ ճանապարհային երթեւեկության անվտանգությանը»:*

Փոխգնդապետին հարցրինք նաեւ ճանապարհային ոստիկան դառնալու ցանկացողների մասին, որին ի պատասխան նշեց. *«Այս պահին իմ ղեկավարած վաշտում թափուր տեղ չկա: Առհասարակ թափուր տեղերի համար տրվում է հայտարարություն, համապատասխան դասընթացներ, բուժզննում անցնելուց եւ որակավորում ստանալուց հետո միայն կարող են ընդունվել աշխատանքի: Հիմնականում կազմը համալրված է գիտելիքներով հարուստ կադրերով. պետք է արձանագրեմ նաեւ, որ տարեցտարի բարձրանում է համակարգ աշխատանքի ընդունվողների կրթական մակարդակը»:* Ոստիկանության փոխգնդապետ Արթուր Ոսկանյանն էլ նշեց, որ երիտասարդ կադրերից դժգոհ չեն. ավելի եռանդուն են, բանիմաց եւ շատ արագ են հարմարվում աշխատանքին, ձեռք բերում համապատասխան հմտություններ:

Հայոց զինված ուժերը համալրող նորակոչիկներին Անդրանիկ Շաղոյանը մաղթեց. *«Տա Աստված մեր երկրին խաղաղություն, ինչքան նորակոչիկ որ ուղեկցենք, այնքան էլ դիմավորենք. նրանցից յուրաքանչյուրն ամեն մի տան ճրագ է: Իսկ վարորդներին մաղթում եմ անվտանգ երթեւեկություն, զգոնություն. զե՛րծ մնացեք մեքենան ոչ սթափ վարելուց եւ արագության գերազանցումից. չէ՞ որ վայրկյանների ընթացքում ճակատագրեր կարող են խաթարվել»:*

Եվ վերջում՝ ինչպես Արցախի Հանրապետության ճամփեզրերից մեկին տեղադրված ցուցանակում էր գրված. «Անսթափ վարորդը հանցագործ է»:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ինչպես չհիանալ «Սյունյաց երկիր» թերթով

ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Էջ 1

Մասնագիտությամբ գյուղատնտեսը նշեց, որ դիրքերում, եթե, իհարկե, ազատ ժամանակ են ունենում, սիրում է շաշկի խաղալ, գրքեր կարդալ:

«Ծառայությունս շատ լավ է անցնում, կարելի է ասել, չէի սպասում, որ այսքան հեշտ կանցնի, ավելի դժվար էի պատկերացնում: Սահմանի զոհերի մասին լուրերը լսելիս մտահոգվում ենք, բայց չենք ընկճվում, քանի որ վստահ ենք մեր ուժերին», – հպարտությամբ նշում է ժամկետային զինծառայող Արմեն Մնացականյանը՝ հավելելով, որ գրեթե ամեն օր էլ կրակոցներ լսվում են, բայց արտառոց դեպքեր տեղի չեն ունենում: Ապագա գինեգործը նույնպես իրեն չի պատկերացնում զինվորական աշխատանքում եւ նախընտրում է սեփական բիզնես ստեղծել:

Սերժանտ Նվեր Մովսիսյանի խոսքով՝ հիմնականում սահմանին զոհեր տալիս ենք զինծառայողների անզգուշության պատճառով: Ապրիլյան առճակատման օրերին, իհարկե, դժվարություններ ունեցան տարբեր առումներով, որոնք հաղթահարվեցին: *«Դիրքերում բավականին լուրջ աշխատանքներ են իրականացվել, բայց եթե ասեմ՝ լիարժեք ապահով ու անվտանգ իրավիճակում ենք, ճիշտ չի լինի, պարզապես պետք է չափազանց զգույշ լինենք: Շատ կարեւոր է հրամանատարության խիստ վերահսկողությունը, ինչի շնորհիվ ավելի ճիշտ է կազմակերպվում մեր ծառայությունը: Նրանց հետ նորմալ հարաբերություններ ունենք, եթե խիստ չլինեն, զինվորն անվերահսկելի կդառնա»,* – խոստովանում է սերժանտը եւ նշում, որ պատրաստ են «դիմավորել» նորակոչիկներին եւ փոխանցել իրենց փորձն ու գիտելիքները:

Համարյա մեկ տարվա ժամկետային զինծառայող, շարքային Հովհաննես Սերոբյանը, ով թատերարվեստի ապագա ներկայացուցիչներից է, խոստովանում է, որ մինչ ծառայության գալը, առավել եւս մարտական դիրքում հերթապահելը, քանի դեռ լիովին չէր պատկերացնում մարտական դիրքի պահպանության կարեւորությունը, որոշակի մտավախություն կար: *«Այս մեկ տարվա ընթացքում Պաշտպանության բանակից շատ դասեր քաղեցի, հասկացա իմ կողքին կանգնած ընկերոջ, կյանքի եւ առհասարակ հայրենիքի գինը: Նորակոչիկներին, ապագա զինվորներին կհորդորեմ չվախենալ եւ չխուսափել ծառայությունից, բանակի հանդեպ դրական տրամադրվել, ներշնչվել մեր հաջողություններով, ոգեւորվել ապրիլյան հերոսներով, ներկա դիրքապահներով եւ, իհարկե, հրամանատարական կազմի գործելակերպով: Հայրենիքի հանդեպ կատարե՛ք ձեր պարտքը եւ զգացեք հայրենի հող ու ջրի իսկական գինը»,* – խորհուրդ տվեց Հովհաննես Սերոբյանը, իսկ ժամկետային զինծառայող, սերժանտ Հովհաննես Մանուկյանը ծնողներին մաղթեց համբերություն. «Սպասեք, մինչեւ գանք հասնենք ձեզ»:

Մարտական դիրքը՝ սրբավայր, իսկ մարտական հերթապահությունը սրբազան պարտականություն համարող զինծառայողները տարածքում կառուցել են փոքրիկ սրբատեղի, որ Աստծո աջը միշտ պահապան լինի: Իսկ մենք, նրանց անփորձանք ծառայություն մաղթելով, վերադառնում ենք՝ հետեւում թողնելով իրենց դիրքերում ամուր կանգնած, կրակոտ աչքերով ու խիզախությամբ լցված, մարտական բարձր ոգի ու պատրաստականություն ունեցող երիտասարդներին:

Թող մարտական դիրքում կանգնած զինծառայողների բոլոր արշալույսները խաղաղ բացվեն…

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

անխախտ սկզբունքով, նպատակով, թե ինչո՞ւ է ստեղծվում եւ ո՞ւմ է հասցեագրվում, եզակի է եւ կապրի ի՛ր ժամանակի ու նաեւ պատմության մեջ:

Հրատարակությունը գալիս է փաստելու խմբագրի պրպտուն, մասնագիտական բարեխիղճ ու պատասխանատու վերաբերմունքը դեպի իր աշխատասիրած գործը, եւ ամենակարեւորը՝ դեպի արվեստն ու մշակույթը, դեպի բարձրագոյն արժեքները:

Համարն ընդգրկում է բազմաժանր ու հարուստ նյութ, որը հնարավորություն է տալիս ամբողջական ճանաչելու Գուսանի եւ նրա սերնդակիցների ապրած կյանքն ու ժամանակաշրջանը: Գուսան Աշոտի ստեղծագործությունների մատենագիտական անդրադարձին հետեւում է Սամվել Ալեքսանյանի՝ համարի ստեղծման մասին հագեցած տեղեկություններ պարունակող եւ Գուսանի արվեստը խորքային դիտարկումներով բնութագրող խմբագրականը: *«Խորհրդային տարիներին Գուսան Աշոտի ստեղծագործություններին, նրա երաժշտական ու բանաստեղծական աշխարհին շատերն էին անդրադարձել»,* – վկայում է Ս.Ալեքսանյանը եւ շեշտում հրատարակության առանցքային նպատակը, այն է՝ ժամանակակից հայացք ձգել Գուսանի կերպարին, մշակութային ժառանգությանը, ինչը գերազանցապես հաջողվել է նրան: Գուսանի ստեղծագործության նշանակությունը թերթի էջերում ներկայացված ու լուսաբանված է «թարմ ու այժմեական» հայացքով:

Չկա Գուսան Աշոտի անձնական ու ստեղծագործական կյանքի հետ կապված որեւէ կարեւոր հարց, որ թերթը տարբեր հարցազրույցների, հուշազրույցների, շնորհավորականների, կարծիքների, ուրվագծային անդրադարձների, գիտական ու գիտահանրամատչելի հոդվածների շրջանակում շոշափած չլինի: Ամեն ինչ ուսումնասիրված ու լուսաբանված է պատշաճ մակարդակով ու ամենակարեւորը՝ նոր աշխարհայացքով:

Գուսան Աշոտի մարդկային նկարագրի ամբողջացման համար խմբագիրն առատորեն օգտագործել է նրա մասին հուշագրությունը, իսկ երգի մեծ վարպետի, արվեստագետի ստեղծագործական դիմապատկերի ամբողջացման համար դիմել է հայ երգարվեստի երեւելիներին՝ խորամիտ ու խորաթափանց հարցադրումների միջոցով բացելով երգահանի ստեղծագործական աշխարհի նրբագին ծալքերը, կյանքի հետաքրքրական անկյունադարձերը:

Մեծ է մշակութային այն հաստատությունների եւ հայ մշակույթի ճանաչված մարդկանց ու գիտնականների ցանկը, որոնց հետ առնչվել ու փոխգործակցել է Սամվել Ալեքսանյանը հրատարակությունը պատրաստելիս: Թերթը բացառիկ հարցազրույցներ է վարել աշխարհահռչակ կոմպոզիտոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ Տիգրան Մանսուրյանի, ՀՀ ժողովրդական արտիստ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի, կոմպոզիտոր, երգիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայոց ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արզաս Ոսկանյանի, Հանրային ռադիոյի Արամ Մերանգյուլյանի անվան ժողգործիքների վաստակավոր անսամբլի գեղարվեստական ղեկավար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Ռուբեն Մաթեւոսյանի, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Արկադի Շեկունցի, ՀՀ կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության նախագահ Արամ Սաթյանի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, գրականագետ Աելիտա Դոլուխանյանի, բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Սամվել Մուրադյանի, Հանրային ռադիոյի «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլի քամանահար ու մեներգիչ Մխիթար Քեթջյանի, «Երգ երգոց» հեռուսատեսային հաղորդաշարի խմբագիր ու սցենարի հեղինակ Լեւոն Գալստյանի, Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական վաստակավոր համույթի գեղարվեստական ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ժիրայր Ալթունյանի, Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի տնօրեն, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գագիկ Մանասյանի, երգչուհի Մանիկ Գրիգորյանի, ՀՀ վաստակավոր արտիստուհի Սուսաննա Սաֆարյանի եւ այլոց հետ:

Գուսան Աշոտի ստեղծագործությունները մշտապես բարձր են գնահատել թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում ապրող գրողները, գրականագետներն ու երաժշտագետները: Գուսանի երգարվեստի շուրջ ստեղծված հիացմունքը երբեք չի պակասել: Բնականաբար, նման ճանաչում ունեցող արվեստագետը պետք է ունենար նաեւ գիտական լայն կապեր, գրական-մշակութային շփումներ: Սամվել Ալեքսանյանը գրապատմական ընթացքից քաղել է այն նյութերը, որոնք անուրանալի գիտական արժեք ունեն եւ կարող են հարստացնել, ըստ ամենայնի բնորոշել Գուսանի մեծությունը, ստեղծագործական նկարագիրը: Համարում տեղ են գտել Սերո Խանզադյանի, Վարդգես Պետրոսյանի, Հրանտ Թամրազյանի, Սեւակ Արզումանյանի, Գեւորգ Աբաջյանի, Շավիղ Գրիգորյանի եւ այլոց անդրադարձները՝ գրված որպես գրքերի առաջաբաններ, գրախոսականներ ու դիմանկարներ, որոնք հաստատում են բանաստեղծ-երգահանի շնորհալիությունը, ստեղծագործական թափը, նրա արվեստում խտացված հայ աշուղական մշակույթի լավագույն ավանդույթները, երգերի զարմանալի կենսունակությունն ու ներուժությունը:

Գուսան Աշոտի բանարվեստի լեզվաոճական առանձնահատկությունները լայն տողանցումով քննել է բանասիրական գիտությունների թեկնածու, բարբառագետ Սվետլանա Մանուչարյանը՝ լրացնելով այդ ասպարեզում առկա բացը:

Համարում առանձին անդրադարձ կա հայ աշուղական արվեստին, դրա ծագման ու զարգացման օրինաչափություններին, ժանրային առանձնահատկություններին, «գուսան» եւ «աշուղ» եզրույթների գիտական ստուգաբանությանն ու բովանդակային տարբերություններին, որոնց շուրջ մասնագիտական տեղեկություններ է հաղորդում աշուղագետ, երաժշտագետ Լուսինե Նազարյանը:

Առանձին հագեցած բաժին է «Գուսան Աշոտը գորիսեցիների հուշերում եւ ընկալումներում» հուշապատումների շարքը: Ամեն ինչ, ի վերջո, պատմություն է դառնում, մնում է միայն վերհիշումը, ինչպես «թիթեռնիկի թեւի վրայից մատի վրա մնացած փոշին» (Կ.Զարյան): Գուսանի մասին սրտի էջեր են հյուսել հոգեկից ու գրչակից, ավագ ու կրտսեր ընկերները, մտերիմները, երգարվեստի երկրպագուները, որոնց հետ իր ստեղծագործական կյանքի ընթացքում այս կամ այն կերպ շփվել ու առնչվել է վարպետը, որոնց թվում են՝ Սամվել Ալեքսանյանը, Ռոբերտ Ալեքսանյանը, Խասան Հարությունյանը, Սուրեն Վարդանյանը, Յուրի Ջավահիրյանը, Ապետնակ Գրիգորյանը, Ժորա Սարդարյանը, Շչորս Դավթյանը, Ալեքսանդր Հայրապետյանը, Էդուարդ Զոհրաբյանը, Արկադի Ծատուրյանը, Արթուր Առաքելյանը, Ալվարդ Մեսրոպյանը, Սեւադա Խոջաբաղյանը, Սուսաննա Բաբաջանյանը եւ ուրիշներ: Այդ հուշակնարկները մեծանուն տաղերգուի ստեղծագործական ու մարդկային դիմանկարին ներարկում են թարմ լիցքեր ու բնութագծեր:

Գուսանի կերպարը հարուստ բանաստեղծական ներշնչանքներ է պարգեւել սերնդակիցներին: Գուսանին նվիրված ձոներգերի շարքը փառազարդում է Քաջիկ Դորունցի բանաստեղծությունը՝ երանելի օրերի «վերհուշով»՝

Երբ դանդ մեջ հյուրակարոտ
Մեղրանում էր երգդ ու գինիդ,
Երբ ժպտերես տեր ու տիկին՝
Կիրասասեր, երգամեծար,
Բացում էին սիրո սինին,
Կապում հույզի մի ծիածան,
Որ սիրո յոթ գույներն ուներ,
Յոթնափորիուրդ, յոթնապարզամ.
Դառնում էինք մերձերգուներ,
Մերձամեծար ու բարեկամ:

Գուսանի ընտանիքի, օջախի պատմությանը ծանոթանում ենք Գուսան Աշոտի որդու՝ Աշոտ Դադալյանի հետ Սամվել Ալեքսանյանի վարած հարցազրույցի շրջանակում: Հոբելյանի առիթով Գուսանի որդու հետ զրուցելը խմբագիրը կարեւորում է մի քանի առումով՝ *«Հետաքրքիր էր իմանալ, թե ինչպե՞ս է պահպանվում Գուսանի օջախը, ինչպե՞ս է ապրում գերդաստանը, որդու տեսակետից՝ որքանո՞վ է նոր սերունդը հաղորդվում Գուսանի երաժշտական արվեստին, արդյո՞ք Գուսանի երաժշտական ու բանաստեղծական ժառանգությունը դիմանում է ժամանակի քննությանը, արդյո՞ք նրա հիշատակը հարգվում է ըստ պատշաճի, արդյոք Գուսանի բոլոր ստեղծագործություններն են հրատարակվել, կա՞ն անտիպ նյութեր եւ ի՞նչ ճակատագիր է սպասվում դրանց»:* Հարցադրումների այս շրջանակն ամբողջանում է հանգամանալից երկխոսությամբ, նոր, հետաքրքրական կենսադրվագների ու փաստերի լուսաբանություններով:

Գուսան Աշոտի ծոռնուհու՝ երաժշտական բարձր ընդունակություններով օժտված Լուսինեի հետ հանդիպման ու զրույցի մասին էսսեատիպ ակնարկ է ներկայացնում Ռեդիկ Հայրապետյանը: Լուսինեն այսօր սովորում է Ջիվանու անվան երաժշտական դպրոցում եւ երազում է դառնալ ժողովրդական երգչուհի՝ հավատարիմ օջախի ստեղծագործական-երաժշտական ավանդույթներին:

Համարի «Օջախում» բաժինը վերջավորվում է Գուսան Աշոտի որդու՝ Ռուբեն Դադալյանի բանաստեղծությունների ծաղկաքաղով: Ռ.Դադալյանի՝ տարբեր տարիների տեղծությունների ծաղկաքաղով: Ռ.Դադալյանի՝ տարբեր տարիների հեղինակած բանաստեղծությունները, քառյակները, գրական հարցերին նվիրված հոդվածները տեղ են գտել մահից հետո լույս տեսած «Անավարտ քնարը» գրքույկում:

«Կրակները սրտերի չեն մարի,
չեն մոխրանա,
Ինչպես կրակ մի անմար, վառ կմնա օջախում»:

Գուսանին նվիրված ներկա հրատարակությունը, լինելով իր տեսակի մեջ բարձր ու յուրատեսակ աշխատասիրություն, մեր աշուղական երգարվեստի պատմության մի փառավոր էջի արտացոլումն է: Այն պետք է վայելենք ամենայն սիրով ու պատասխանատվությամբ, քանզի հոգեւոր արժեքներով ապրելու, հոգեւոր արժեքներին արժանավայել կերպով տեր կանգնելու խորհուրդներ է պատգամում, որոնք մեր օրերում առավել քան անհրաժեշտ են:

Թերթը զարդարված է բազմաթիվ որակյալ արտանկարներով եւ ձեւավորված գեղարվեստական բարձր ճաշակով: Բազմահարուստ բովանդակությամբ, ճանաչողական արժեքով, գիտահանրամատչելիությամբ թերթի սույն թողարկումը խմբագրակազմի հմուտ, նպատակասլաց, մշակութանվեր գործելակերպի ու տքնաջան աշխատանքի առհավատչյան է:

Համարի կիրառական նշանակությունն անվիճելիորեն մեծ է, եւ դեռ երկար այն կմնա ընթերցողների սեղանին՝ ոչ միայն իբրեւ Գուսանի «կյանքի հեքիաթը» (Հակոբ Օշական) լուսաբանող շտեմարան, այլեւ տեղեկատվության աղբյուր՝ նրա արվեստն ուսումնասիրողների համար:

«Վերջապես կցանկանայինք, որ մեր ազգն էլ կարողանար տեսնել, տեսնել, գնահատել ու պաշտպանել իր ծնած ուժերը: Եվ երբ որ տեսնի, կհամոզվի, որ նրանց մեջ էլ կան այնպիսիները, որոնք իրենց տաղանդով մրցում են ու հավասար են եվրոպական ժողովուրդների սիրված, հանրահռչակ հեղինակներին, տարբերությունը միայն սրանց ու նրանց բախտի մեջն է» (Հովհաննես Թումանյան):

Գուսան Աշոտն ինքը մարմնացած հայ երգն էր: Նրա արվեստը, իբրեւ մահի վրա հաղթանակ, կհարատեւի: *«Եթե լույսը պիտի ճեղքի խավարը, երգը պիտի ներկա լինի»,* – գրում է Կոստան Զարյանը: Գուսանի ստեղծագործությունները հայրենի հողի նման կենարար են եւ հնչելու են ժողովրդի սրտի բաբախի հետ, ժողովրդին շունչ ու ոգի են տալու, մարդու մարդկայնացման ու լույսի վերադարձի ուղիներ են մատնանշելու:

Ի՞նչ է կատարվում Զանգեզուրի պղնձամոլիբդենայինում

Ընկերությունը երեք տարում խոշոր հարկատուների ցուցակի 1-ին տեղից հասել է 16-րդ տեղը, իսկ 2016 թվականին (2013-ի համեմատությամբ) 29 մլրդ դրամ պակաս հարկ է վճարել պետբյուջե

Փորձենք գնահատել Սյունիքի ներկայիս մարզպետ Վահե Հակոբյանի աշխատանքի արդյունավետությունը՝ ոչ թե ըստ իր ստացած աշխատավարձի, այլ իր ղեկավարման տակ գտնվող հաստատությունների տնտեսական գործունեության արդյունքների ու վճարած հարկերի: Ի վերջո, ամսական 11 մլն դրամ աշխատավարձը պետք է որ ինչ-որ արդյունքների համար վճարված լիներ. դժվար թե նման աշխատավարձ միայն share-երին ու like-երին հետեւելու համար վճարելիս լինեին:

Վերլուծությունը սկսենք «Քրոնիմետ»-ի կայքից, ըստ որի՝ ՀՀ-ում նրանք ներկայացված են հետեւյալ կերպ.

Ընկերություն	Քաղաք
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ (այսուհետ՝ ԶՊՄԿ)	Քաջարան
«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ	Երեւան
«Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» ՓԲԸ	Քաջարան
«Ինտերնեյշնալ բեյզ մետալ թրեյդինգ լոգիստիքս» ՍՊԸ	Քաջարան

Վերջին ընկերությունը նույնիսկ չհաջողվեց գտնել պետական ռեգիստրի բազայում: Այսուհետ բոլոր վերոհիշյալ ընկերությունները միասին՝ «Խմբի ընկերություններ»:

Այսպես, «Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների եւ նրանց կողմից վճարված հարկերի եւ տուրքերի մեծությունների» հաշվետվություններից տեղեկանում ենք խմբի ընկերությունների կողմից 2013-2016թթ. վճարված հարկերի վերաբերյալ.

Վերլուծության արդյունքում պարզվեց հետեւյալը. խմբի ընկերությունները 2016թ. ՀՀ պետական բյուջե վճարել են 11 մլրդ դրամ հարկի տեսքով՝ ի հակակշիռ 2013թ. վճարված 40 մլրդ դրամի:

Միգուցե ՀՀ-ի այլ բոլոր ընկերությունների մոտ էլ առկա է նման իրավիճակ: Նման կասկածները փարատելու համար ներկայացնենք խմբի ընկերությունների հարաբերական դիրքը «Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների եւ նրանց կողմից վճարված հարկերի եւ տուրքերի մեծությունների» հաշվետվություններում (ցանկ 1):

2014թ. ու 2015թ. ՀՀ պետական բյուջե 3 մլն դրամ եւ ավելի եկամտային հարկ վճարած հարկային գործակալների վերաբերյալ հաշվետվություններն ուսումնասիրելիս (2016թ. վերաբերյալ դեռ չի հրապարակվել) ԶՊՄԿ-ի վերաբերյալ ստացվում է հետեւյալ պատկերը (ցանկ 2):

Ի՞նչ են հուշում վերոնշյալ թվերը. օրինակ այն, որ վճարված եկամտահարկը 2015 թվականին, ի տարբերություն 2014թ., 95%-ով աճել է: Հասկանալի է՝ աշխատավարձը միջինում 95%-ով չեն բարձրացրել: Կարելի է եզրակացնել, որ 2015թ. անբավարար տնտեսական արդյունքների հետեւանքով քիչ հաշվարկված հարկերի փոխհատուցման համար հսկայական կանխավճարներ են տրվել: Դրա մասին է խոսում նաեւ այն, որ շահութահարկը սկսել է զիջել եկամտահարկին: Սպառվել են շրջանառու միջոցները. հետեւանքներն իրենց երկար սպասել չեն տվել. 2016թ. վճարված հարկերը կտրուկ նվազել են: Երբ տնտեսական խնդիրներ են ի հայտ գալիս, ընկերությունները, որպես կանոն, սկսում են խնայել միջոցները, իսկ այդտեղ, կարծես, «Մեզնից հետո թեկուզ ջրհեղեղ» սկզբունքն է գործում:

Իսկ ի՞նչ է նշանակում ԶՊՄԿ-ի 16-րդ հորիզոնական զբաղեցնելը. սա, եթե չեմ սխալվում, առաջին դեպքն է, որ ԶՊՄԿ-ն խոշոր հարկատուների առաջին տասնյակի մեջ չի ընդգրկվել: Փաստորեն, ընկերության ֆինանսական դրությունը տարեցտարի այնքան է ծանրացել, որ 2016թ. նույնիսկ կանխավճարներով չեն կարողացել պահպանել թվերը: Եթե այսպես շարունակվի, ապա ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող ԶՊՄԿ-ն ու խմբի այլ ընկերությունները հնարավոր է եւ ծնկի իջնեն:

Չփորձենք գուշակություններ անել, սակայն չենք կարող չնշել՝ երբ արեւմտյան ընկերություններում իրավիճակն այսքան ծանրանում է, առաջին հերթին կրճատվում են ղեկավարության աշխատավարձերը, եւ հաճախ ղեկավարության նկատմամբ անվստահության խնդիր է բարձրացվում: Իսկ մեզ մոտ…

ԱՐԹՈՒՐ ՕՐԲԵԼՅԱՆ

Ցանկ 1

հազար դրամ	2013	2014	2015	2016
Ուղղակի հարկեր	18,011,762	8,495,439	11,624,809	5,067,082
Անուղղակի հարկեր	5,616,805	4,504,770	2,953,364	3,168,147
Այլ հարկեր	16,159,690	9,414,912	15,689,463	2,898,955
Ընդամենը	39,788,256	22,415,122	30,267,636	11,134,184

Ցանկ 2

Ընկերության դիրքը հարկատուների ցուցակում	2013	2014	2015	2016
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	1	4	2	16
«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ	53	56	56	87
«Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» ՓԲԸ	-	543	197	229

Ցանկ 3

հազար դրամ	2014	2015
ԶՊՄԿ-ի կողմից վճարված եկամտային հարկ	2,804,240	5,474,000
ԶՊՄԿ-ի կողմից վճարված շահութահարկ	3,792,856	4,616,210

Մի «բարեգործական» ընկերության վերաբերյալ

Վերջին երկու հոդվածներում փորձել էինք գնահատել մարզպետ Վահե Հակոբյանի կողմից՝ մինչ մարզպետությունը ղեկավարվող հաստատությունների տնտեսական գործնեության արդյունավետությունը: Ինչպես հիշում եք, արդյունքում արդյունավետության մասին խոսք չկար: Այս անդրադարձում էլ դիտարկվում է մեկ այլ ընկերություն, որը ղեկավարվում է Վահե Հակոբյանի կնոջ՝ էլիզաբեթ Պետրոսյանի կողմից, ու որին տրված է «բարեգործական» որակումը: Բարեգործական հասարակական կազմակերպություն, որի քողի տակ տարեկան առնվազն 60 մլն դրամ բյուջեով հեռուստաընկերություն են փորձում ստեղծել, այն էլ՝ ոչ այնքան արդյունավետ: Այժմ՝ հերթով:

Առաջին քայլով ֆեյսբուքում գտնում ենք էլիզաբեթ Պետրոսյանի էջն (այնտեղ նա գրանցված է Eliza Beth անվան տակ) ու սակավաթիվ գրառումների արանքներում պարբերաբար նկատում ենք «Հանրային դիվանագիտություն» էջը: Սա հենց այդ բարեգործական հասարակական կազմակերպությունն է: Այցելում ենք ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր ու ստանում փաստաթղթերի պատճենները: Կազմակերպությունը հիմնադրվել է 2014թ. նոյեմբերի 21-ին, Լիլիթ Թումանյան (AN0267047, գրանցման հասցե՝ Աջափնյակ, Հալաբյան փ. 29 շ., 21 բն.) ու Մարիաննա Սարգսյան (AM0381838, գրանցման հասցե՝ Նոր Նորք, Նանսենի փ. 6 շ., 34 բն.): Ի դեպ, սա նույն Նանսեն փողոցն է, որտեղ գրանցած է նաեւ Վահե Հակոբյանի նոր կինը՝ էլիզաբեթ Պետրոսյանը:

Փաստորեն, առկա է խիստ սակավաթիվ մասնակիցներով ՀԿ, որի շրջանակներում որոշվել է հեռուստաընկերություն ստեղծել: ՀՀ հեռուստաընկերությունները կամ ՁԼՄ-ները, որպես կանոն, ինչ-որ տնտեսական շահերի պաշպանման, այլ ոչ «բարեգործական» կամ բիզնես նպատակներ են հետապնդում: Ըստ նրանց՝ այն բարեգործական ՀԿ-ի խոշորագույն նախագծերից է. այսինքն, մարդիկ կարծում են, որ ՀՀ-ում բարեգործական ամենամեծ քայլը, որի պակասը կա, եւս մեկ հեռուստատեսություն ստեղծելն է: Սակայն, ուսումնասիրելով «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողով» կայքն ու ծանոթանալով «Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում» գրանցված որոշումներին՝ պարզում ենք, որ para.tv-ն դեռ լիցենզավորված չէ: Վերջերս Երեւանում նկատվում են para.tv պաստառները, որի վրա պատկերված են հանրային ճանաչում ունեցող 5 տարբեր տղամարդիկ. խոսքն այս նախագծի մասին է:

ՀԿ-ները մինչ 2017թ. հաշվետվություն ներկայացնելու որեւէ պարտավորություն չունեին, այդ է պատճառը, որ այս պահին հանրայնորեն միայն սահմանափակ տեղեկատվություն է հասանելի այս ՀԿ-ի ֆինանսավորման ու ծախսերի վերաբերյալ: Սակայն, ամենահամեստ գնահատականով վերջին տարվա ընթացքում այդ նախաձեռնության վրա ծախսվել է մոտ 60 միլիոն դրամ՝ գրասենյակը Հյուսիսային պողոտա 1 հասցեով, ճանաչելի հեղինակների աշխատավարձեր, պաստառներ Երեւանի տարբեր անկյուններում (առնվազն 11 հատ): Հետաքրքիր է՝ ի՞նչ միջոցներով է ֆինանսավորվում այս «բարեգործությունը», հուսանք՝ ոչ ԶՊՄԿ-ից կամ նրա հետ որեւէ առնչություն ունեցող միջոցներից:

Ահա, թե ինչպիսի արդյունքների են հասել նրանց «աշխատանքները». այցելելով Ամազոն ընկերությանը պատկանող alexa.com կայքը՝ պարզում ենք հետեւյալը (հուլիսի 5-ի դրությամբ) (ցանկ 1):

Այսպիսով, նշմարվում է ռեսուրսների հերթական անարդյունավետ օգտագործումը:

Փաստորեն, նրանց մասին գրելով՝ մենք հիմա նրանց գովազդն ենք իրականացնում: Կատակը մի կողմ, Վահե Հակոբյանի հետ կապված բոլոր ուսումնասիրությունները միշտ մի հարց են առաջացնում. ինչ-որ մեկը ծախսերի արդյունավետությունը հաշվարկո՞ւմ է, թե՞ նրան փրկում է այն փաստը, որ ԶՊՄԿ-ն արդեն «գծերի» վրա է, եւ այս «կողմնակի» ծախսերի հետ ոչ ոք հաշվի չի նստում: Մինչդեռ, անարդյունավետության պատճառով ԶՊՄԿ-ն էլ կարող է «գծերից» ընկնել, իսկ դա ՀՀ-ի համար անթույլատրելի է:

Հ.Գ. Հիշենք, որ Վահե Հակոբյանի կնոջ՝ էլիզաբեթ Պետրոսյանի հայտարարագրից պարզել էինք, որ 2016թ. նա աշխատավարձ էր ստացել երեք տարբեր գործատուներից՝ համապատասխանաբար՝ 12,000,000; 12,614,569 եւ 16,430,188 դրամի չափով: Հուսանք, որ նա վերոնշյալ ՀԿ-ում աշխատում է հասարակական հիմունքներով ու այդ երեք աշխատավարձից եւ ոչ մեկը չի ստացել «Հանրային Դիվանագիտություն» բարեգործական ՀԿ-ից: Քանի որ ՀՀ-ում «սահմանափակ» բարեգործական գործունեություն իրականացնող ՀԿ-ից նման խոշոր չափի աշխատավարձ ստանալն ուղղակի անտրամաբանական է ու խելահեղություն, եթե նույնիսկ մի պահ մոռանանք բարոյականության մասին:

ԱՐԹՈՒՐ ՕՐԲԵԼՅԱՆ

Ցանկ 1

Ամսաթիվ	Գործառույթ	ՀԿ-ի անդամների քանակ
21/11/2014	Սոցիալական հասարակական կազմակերպության գրանցում	2
31/07/2015	Սոցիալական հասարակական կազմակերպությունը վերանվանվել է «բարեգործական հասարակական կազմակերպություն»	6
24/03/2016	Էլիզաբեթ Պետրոսյանին՝ որպես ՀԿ նախագահի նշանակում	3

Ցանկ 1

Կայք	Համաշխարհային վարկանիշային դիրք
www.paradiplomacy.tv	6,518,514
www.paradiplomacy.am	8,477,689
www.para.tv	8,670,674

Վահե Հակոբյանի հետքերով. 800 տոննա մոլիբդենի առեղծվածային պատմություն

Փորձենք գնահատել Սյունիքի ներկայիս մարզպետ Վահե Հակոբյանի կողմից՝ մինչ մարզպետ դառնալը ղեկավարվող հաստատություններից մեկի տնտեսական գործունեությունը՝ ըստ տված արտադրանքի: Պարզվում է՝ 2015թ. հիմնավոր ենթադրյալից մոտ 4 մլրդ դրամով ավելի քիչ ֆերոմոլիբդեն է արտահանվել հանրապետությունից: Այժմ՝ հերթով:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կայքից տեղեկանում ենք, որ խմբի ընկերությունները պղնձի ու մոլիբդենի խտանյութ են արտադրում: Իսկ խմբի մեկ այլ ընկերության՝ «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի կայքից տեղեկանում ենք, որ այդ ձեռնարկությունը մոլիբդենի խտանյութից ֆերոմոլիբդեն է ստանում, ինչն էլ արտահանվում է: Այս տեղեկատվությունը մտապահած՝ այցելում ենք ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության կայք ու փնտրում մոլիբդեն արդյունահանող ընկերություններ, քանզի մոլիբդենը, ի տարբերություն պղնձի, ավելի հազվադեպ է հանդիպում մեր հանքարդյունաբերության մեջ:

Հայաստանի Հանրապետությունում «Հանքերի եւ հանքերեւակումների անձնագրերի» ու «Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների» ուսումնասիրությունից պարզվում է, որ մոլիբդենի հանքերի արդյունահանման իրավունք ունեն՝

- «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն եւ իր դուստր «Լեռ-էքս» ՍՊԸ-ն,
- «Ագարակի» ՊՄԿ ՓԲԸ-ն,
- «Թեղուտ» ՓԲԸ-ն,
- «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ն,
- «Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ-ն,
- «Թաքսթուն» ՍՊԸ-ն:

«Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների եւ նրանց կողմից վճարված հարկերի եւ տուրքերի մեծություններ» հաշվետվություններից երեւում է, որ վերջին երեք ընկերությունը մեծ գործունեություն չեն իրականացնում: Հետեւաբար կարող ենք հաշվարկներում չներառել դրանց ցուցանիշները: Իսկ «Ագարակի» ՊՄԿ ՓԲԸ-ի ու «Թեղուտ» ՓԲԸ-ի կայքերից տեղեկանում ենք, որ նրանք արտադրում ու արտահանում են մոլիբդենի խտանյութ: Այսինքն՝ ստացվում է, որ առնվազն մինչեւ 2016թ. վերջ ՀՀ-ից արտահանվող ֆերոմոլիբդենը պատրաստված է միայն ԶՊՄԿ-ի մոլիբդենի խտանյութից: Ու կարծում եմ՝ հակառակ ենթադրությունն էլ ճշմարիտ կլինի՝ ԶՊՄԿ-ի մոլիբդենի խտանյութն արտահանվում է միայն ֆերոմոլիբդենի տեսքով: Այլապես կստացվեր, որ անարդյունավետ կառավարման հետ գործ ունենք. անընդհատ խոսում ենք ՀՀ արդյունաբերության զարգացման ու արժեքի ստեղծման մասին, բայց իրականում կիսապատրաստուք ենք արտահանում:

Այցելելով Միացյալ ազգերի միջազգային առեւտրի տվյալների բազա՝ գտնում ենք ՀՀ-ից արտահանված ֆերոմոլիբդենի (կոդ 7202 70) քանակներն ու ստանում ստորեւ ներկայացված պատկերը.



Պետք է հաշվի առնել, որ խտանյութի արտադրությունն ու վերամշակումն անընդհատ գործընթացներ են: Դրանք կանգնեցնելն ու վերսկսելը շատ թանկ արժեն ու կատարվում են միայն այլընտրանք չլինելու դեպքում: Սա է պատճառը, որ տարեկան 800 տոննա ֆերոմոլիբդենի պակաս արտահանումը չափազանց ուշագրավ է: Մի պահ ենթադրելով, որ այս նվազման մեջ ոչ մի քրեական տարր չկա, պետք է ենթադրել, որ որեւէ շատ էական, արտառոց դեպք է պատահել, ասենք՝ վերամշակողներից որեւէ մեկի գործունեության խափանում ամիսներ շարունակ կամ ինչ-որ ֆորս մաժոր: Եվ քանի որ ՀՀ-ում ապրելով՝ այդպիսի դեպքի մասին չենք լսել, ապա սա կարելի է որակել նվազագույնը որպես անթույլատրելի անփութություն, որի համար հաստատ չեն խրախուսում ու հսկայական աշխատավարձեր չեն վճարում: Եթե ոչ հակառակը: Իսկ քրեական տարրի առկայության կամ չար կամքի դրսեւորման դեպքում գործով պետք է իրավապահ մարմինները հետաքրքրվեն:

ԱՐԹՈՒՐ ՕՐԲԵԼՅԱՆ

Հակերային հարձակում «Սյունյաց երկիր» թերթի կայքի վրա

2017թ. հուլիսի լույս 10-ի գիշերը հակերային աննախադեպ գրոհ է սկսվել «Սյունյաց երկիր» թերթի կայքի վրա, որը կարողացել ենք չեզոքացնել հուլիսի 11-ի ժամը 19-ի սահմաններում: Մասնագետների գնահատմամբ՝ հարձակումը կատարվել է ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլեւ աշխարհի տարբեր երկրների տարածքից:

Սկզբից ի վեր միջոցներ են ձեռնարկվել գրոհը չեզոքացնելու եւ կայքի աշխատանքը վերականգնելու ուղղությամբ:

Թերթի խմբագրությունը հուլիսի 11-ին կատարվածի մասին տեղյակ է պահել ՀՀ ոստիկանության կիբերհանցագործությունների դեմ պայքարի բաժնին:

Կատարվածի մասին խմբագրությունը հուլիսի 11-ին պաշտոնական գրություն է հղել ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչությանը:

Մինչ այդ վերջին երկու-երեք օրում տեղի են ունեցել անսովոր իրադարձություններ, որոնք թույլ են տալիս աղոտ ենթադրություններ անել նաեւ հակերային հարձակման հեղինակի կամ պատվիրատուի մասին:

Նախ՝ Սյունիքի մարզպետի կարգադրությամբ սպառնալից մեսիջներ են ուղարկվում մարզպետարանի ենթակա կառույցների ղեկավարներին՝ հստակ պահանջով՝ հրաժարվել «Սյունյաց երկիր» թերթը ստանալուց եւ ընթերցելուց:

Այնուհետեւ՝ հերթով մարզպետարան են հրավիրվում «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության աշխատակիցներ. նրանց առաջարկվում է մինչեւ 250 հազար դրամ աշխատավարձով աշխատանք եւ դրամական խրախուսանք, եթե հեռանան թերթի խմբագրությունից:

Այդ ամենը թույլ է տալիս ենթադրել, որ մարզպետ Վահեն առնվազն առնչակից է «Սյունյաց երկիր» թերթի կայքի վրա կատարված ավազակային հարձակմանը:

Այդպիսի ենթադրության համար հիմք են ծառայում այլ հանգամանքներ եւս. հակերային նման լայնածավալ հարձակման համար, ըստ մասնագետների, անհրաժեշտ է մի քանի տասնյակ հազար դոլար գումար: Եվ ուրեմն՝ ո՞վ է այն անձնավորությունը կամ տնտեսվարող սուբյեկտը, որ կարողանում է նման միջոցներ ծախսել՝ syuniacyerkir.am կայքը լռեցնելու համար:

Այդ օրերին մարզկենտրոնում, հին օրերի ավանդույթի համաձայն, անանուն նյութեր են տարածվել թերթի խմբագրի դեմ (Կապանում երկու շնչավոր է մնացել՝ մի քանի շիշ գարեջրի կամ մի քանի լիտր տեխնիկական սպիրտի դիմաց անոնիմկա գրող ու տարածող, նրանց ձեռքի գործն է ստուգապես, թող շարունակեն գրել): Ամբողջ Սյունիքում գիտեն նաեւ, թե ով է մեզանում վերջին տարիներին անանուն նյութեր պատվիրում:

Մյուս կողմից՝ կայքի մտահոգ ընթերցողներին հետաքրքրում է՝ ո՞ւմ էր ձեռնտու Սյունիքի մարզի առօրյան ճշմարտացիորեն լուսաբանող կայքի գործունեությանը՝ թեկուզ եւ ժամանակավոր դադարեցումը:

Ինչ վերաբերում է թերթի ու կայքի վրա հարձակում կազմակերպած փոքրիկներին, ապա պետք է հիասթափեցնենք նրանց՝ ոչ մի պարագայում «Սյունյաց երկիր» թերթը, syuniacyerkir.am կայքը չեն դադարելու գործել: Ավելի հզոր մարդիկ են անցած տարիներին փորձել փակել «Սյունյաց երկիր»-ը՝ չխնայելով ոչինչ, բայց կորել-գնացել ու մոռացության են մատնվել: Անցած տասնհինգ տարում միայն յոթ անուն թերթ է հիմնադրվել Կապանում՝ «Սյունյաց երկիր» թերթին հակակշռելու եւ խմբագրին անվանարկելու, հայհոյելու համար, սակայն նրանք էլ ի չիք են դարձել՝ հունիս ամսին տեղացած ձյան պես: Փոքրիկների այս հանդեսն էլ կավարտվի շուտով: Իսկ Սյունիքն ու «Սյունյաց երկիր»-ը կան ու կմնան:

Մեզ ստեղծագործական բուռն ժամանակներ են սպասվում:

«Սյունյաց երկիր»
12 հուլիսի 2017թ.

Սյունեցիների մասնակցությունը Մեծ հայրենականին

«Զանգակ» հրատարակչությունում լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր, ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Կլիմենտ Հարությունյանի «Սյունիքի զավակների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945թթ.)» աշխատությունը: Ընթերցողին քաջ հայտնի են նրա ուսումնասիրությունները, պատմաբանը մասնագիտացել է Հայաստանի առաջին հանրապետության բանակի, Խորհրդային Հայաստանի հայկական ազգային զորամիավորումների եւ զինվորական մամուլի, Երկրորդ համաշխարհային եւ Հայրենական մեծ պատերազմներին հայ ժողովրդի մասնակցության պատմության, հայ մարշալների, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գեներալների կենսագրությունների լուսաբանման հիմնահարցերում: Դեռեւս 2010 թվականին պատմաբանի եւ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Պողոսյանի հեղինակությամբ լույս էր տեսել «Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941-1945թթ.)» ստվարածավալ աշխատությունը, որի շնորհանդեսը եղավ մարզկենտրոն Կապանում: Այս անգամ եւս ըստ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի փաստաթղթերի՝ համապատասխան գրականության եւ մամուլի նյութերի հիման վրա առաջին անգամ հայ պատմագրության մեջ լուսաբանված եւ ամբողջական ներկայացված է սյունեցիների մասնակցությունը 1941-1945

թվականների Հայրենական մեծ պատերազմին:

«*Ասեմ, որ մոտ քառասուն տարի աշխատելով ԽՍՀՄ, ապա Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում՝ փաստական հսկայական նյութ էի հավաքել, մնում էր նստել եւ շարադրել»,* – պատմում է Կլիմենտ Հարությունյանը:

Աշխատությունը բաղկացած է չորս գլխից, վերջաբանից, իսկ հավելվածում ներկայացված է Հայրենական մեծ պատերազմում զոհված սյունեցիների ցուցակը՝ ըստ տարածաշրջանների՝ Գորիս, Կապան, Մեղրի, Սիսիան: Առավել ընդգրկուն է գրքի առաջին գլուխը, որում պատմաբանը նախ անդրադարձել է երկրում պատերազմի նախօրյակին ստեղծված ռազմաքաղաքական իրադրությանը, այնուհետեւ՝ պատերազմի սկզբի առաջին մարտերին, Բրեստի ամրոցի հերոսական պաշտպանությանը: Հեղինակը վկայակոչում է փաստը, որ Բրեստի ամրոցի պաշտպանների թվում էին մոտ 500 հայորդի, որից ավելի քան 200-ը 1939 թվականի դեկտեմբերին զորակոչվել էին Կապանի շրջանից, նրանցից 76-ը մինչեւ զորակոչվելն ուսուցիչ էր աշխատում: Բրեստ ամրոցի պաշտպանների թվում էր Սոս Նուրիջանյանը (Կապանի Վաչագան գյուղից), ում «Արյունով ներկված լուսաբաց» գրքույկում ականատեսի աչքերով պատմվում է 1941 թվականի հունիսի 22-ից մինչեւ հուլիսի 16-ը տեղի ունեցած մարտերի մասին, հեղինակն էլ մի ամբողջական հատված է ներկայացնում այդ ճշմարտապատում հուշերից: Այնուհետեւ առանձին-առանձին շարադրել է Մոսկվայի, Ստալինգրադի, Կուրսկի ճակատամարտերում, Կերչի եւ Ղրիմի համար մղված մարտերում, Ուկրաինայի, Բելառուսիայի, Լենինգրադի, Կարելիայի եւ Անդրբեւեռի, Մերձբալթյան հարնապետություններում սյունեցիների մասնակցությունը:

Երկրորդ գլխում ներկայացված է սյունեցիների մասնակցությունը ֆաշիստական լծից արեւելյան եւ կենտրոնական Եվրոպայի (Լեհաստան, Ռումինիա, Հարավսլավիա, Հունգարիա, Ավստրիա, Չեխոսլովակիա) երկրներն ազատագրողների շարքերում: Արեւելապրուսական ռազմավարական հարձակողական գործողություններում ձեռք բերած հաջողության մեջ զգալի ավանդ են ձեռք բերել հայ ժողովրդի զավակները, նաեւ սյունեցիները: Այս մասին կարելի է կարդալ աշխատության երրորդ գլխում, որի մի զգալի մասը նվիրված է Գերմանիայի մնացած տարածքների, ինչպես նաեւ Բեռլինի համար մղված մարտերին սյունեցիների մասնակցության մասին: Ավելի քան 500 սյունեցի ֆաշիստական Գերմանիայի ջախջախմանը եւ Բեռլինի գրավմանը մասնակցել է Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի շարքերում:

էջ 8

Ամերիկյան մշակութային շրջագայություն մարզում

Լրանում է Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ Հայաստանի դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25 տարին: Այդ առթիվ «Ամերիկյան մշակութային շրջագայություն-2017» ծրագրի շրջանակում հուլիսի 9-ին Կապանում էր ԱՄՆ դեսպանատան պատվիրակությունը: Կապանի էլեկտրոնային գրադարանում, որ նաեւ ստեղծվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, հյուրերի համար համերգային փոքր ծրագրով հանդես եկան Կապանի երաժշտական դպրոցների սաները: Դիվանագետներից մեկը երեխաների համար ընթերցեց հեքիաթ, թե ինչպես են Ամերկայում նշում ծննդյան տոները եւ հետաքրքիր զրույց ծավալվեց, թե ինչպես են նշվում Ծննդյան տոներն Ամերիկայում եւ Հայաստանում:

Այնուհետեւ ԱՄՆ դեսպանատան պատվիրակությունն այցելեց Կապանի քաղաքապետարան, որտեղ ԱՄՆ դեսպանատան մամուլի կցորդ Ջեյք Գոշերթը եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գիզերը հանդիպել են Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հետ, քննարկել երկուստեք շահագրգռություն ներկայացնող խնդիրներ:

Ծրագրի շրջանակում Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցում ջազի վարպետության դաս անցկացվեց կրթօջախի սաների հետ, որ վարում էր Հայաստանի պետական ջազ նվագախմբի գեղարվեստական ղեկավար Արմեն Հյուսնունցը, ով «Սյունյաց երկրի» հետ զրույցում կարեւորեց ջազի տարրերի ուսուցումը երաժշտական դպրոցներում:

Այնուհետեւ ծրագրով նախատեսված՝ մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում ցուցադրվեց «Կարմիր սրտերի Ջեքը» ամերիկյան ֆիլմը, որ պատմում է ընտանիքը լքած դեռահաս աղջկա մասին, ով ստանձնում է 11-ամյա մի աուտիստիկ աղջկա խնամքը՝ ամուր կապեր ստեղծելով փոքրիկի եւ նրա ընտանիքի անդամների հետ: Իսկ երեկոյան կապանցի արվեստասերների առջեւ Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում համերգով հանդես եկավ Հայաստանի պետական ջազ նվագախումբը՝ ներկայացնելով ամերկացի եւ հայ հեղինակների ստեղծագործություններ: Նախօրեին ջազ-նվագախումբը ելույթ էր ունեցել Մեղրիում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Վախճանվել է Արտաշես Հովսեփյանը

Հուլիսի 6-ին 86 տարեկանում կյանքից հեռացել է ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արտաշես Հովսեփյանը:

Արտաշես Հովսեփյանի մահվան կապակցությամբ ստեղծվել է թաղման կառավարական հանձնաժողով:

Նա ծնվել է ՀՀ Սյունիքի մարզի Սառնակունք գյուղում: Եղել է գեղանկարիչ Զաքար Խաչատրյանի եղբայրը: Ավարտել է Սիսիանի շրջկենտրոնի միջնակարգ դպրոցը, աշխատել բանվոր: 1954թ. ընդունվել է Երեւանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան, սակայն 2-րդ կուրսից նրան գործուղել են Սանկտ Պետերբուրգի Ի.Ն.Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ինստիտուտ, որն ավարտել է 1961թ.:

Արտաշես Հովսեփյանի՝ Մաեստրոյի (ինչպես իրեն անվանում էին արվեստակից ընկերները) արվեստին բնորոշ են ծավալապլաստիկ խնդիրների համարձակ եւ դիպուկ լուծումները, գեղարվեստական ընդհանրացման մեծ ուժն ու մոնումենտալիզմի խոր զգացողությունը: Ակադեմիական կերպարվեստի եւ քանդակագործության շունչն ու ոգին վերընձյուղելով իր խորապես հայկական էությանը, հարազատ Սյունյաց լեռների գեղեցկությամբ ներշնչված մտապատկերներին, Արտաշես Հովսեփյանը քանդակը վերածում էր երկրի ու մարդկանց մասին քարե պատմության, հուշարձանը՝ վերածում քարե պոետիկայի:

Նրա առավել հայտնի աշխատանքների թվին է պատկանում Ալեքսանդր Թամանյանի արձանը (1974թ., Երեւան, ճարտարապետ՝ Սեդա Պետրոսյան), Սուրբ Սարգիս եկեղեցու որմնաքանդակները (1975 թ., Երեւան, ճարտարապետ՝ Ռաֆայել Իսրայելյան), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանի բակի խաչքարը (1975թ.), Սիսիան քաղաքի մուտքի արծիվը (1975թ.), Երեւանի կոնյակի գործարանի որմնաքանդակները (1975-1993թթ.), Կ. Դեմիրճյանի անվան Երեւանի Մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանի որմնաքանդակները (1981թ.), կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի արձանը (1987թ., ճարտարապետ՝ Ֆենիքս Դարբինյան), գիտնականներ Օրբելի եղբայրների հուշարձանը (1988թ., ք. Ծաղկածոր, ճարտարապետ՝ Ռոմեո Ջուլհակյան):

Արտաշես Հովսեփյանը ստեղծել է նաեւ դիմաքանդակների հոյակերտ շարք, ինչպես նաեւ գրաֆիկական աշխատանքներ: Արվեստագետի վերջին ստեղծագործություններից մեկն արձակագիր Հրանտ Մաթեւոսյանի արձանն է՝ գրողի անունը կրող դպրոցի բակում (2013թ., Երեւան):

Սյունեցիների մասնակցությունը Մեծ հայրենականին

էջ 7

Դիվիզիա, որ Կովկասի նախալեռներից մարտական ուղի է անցել Կուբանի, Թամանի, Կերչի, Ղրիմի, Լեհաստանի, Գերմանիա-Բեռլինի միջով մինչեւ Էլբա: Առանձին ենթավերնագրի տակ պատմաբանն անդրադարձել է դիվիզիայի սյունեցի մարտիկներին, ովքեր աչքի են ընկել Գերմանիայի բնակավայրերի, ինչպես նաեւ Բեռլինի գրավման համար մղված մարտերի ժամանակ: Գրքի չորրորդ գլուխը պատմում է պատերազմական ու դիմադրական շարժման շարքերում մարտնչած սյունեցիների մասին, նրանց թվում կան ֆրանսիական դիմադրական շարժման ղեկավար Միսաք Մանուշյանի ջոկատում մարտնչածներ:

Գրքի վերջաբանում ամփոփելով սյունեցիների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին՝ հեղինակը բերում է թվական տվյալներ, ըստ նրա հաշվարկների՝ Սյունիքի չորս շրջաններից՝ Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի, 1941-1945 թվականներին ռազմաճակատ է մեկնել 22.946 մարդ, որոնցից զոհվել է 10.690-ը: Քաջությամբ աչքի ընկած 12 հոգի արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ մեկն էլ՝ Գրիգոր Գրիգորյան, պարգեւատրվելով փառքի 3-րդ, 2-րդ, 1-ին աստիճանի շքանշաններով, դարձել է Փառքի շքանշանի լրիվ ասպետ, որի իրավունքները հավասարեցված էին Խորհրդային Միության հերոսի իրավունքներին: Հայրենական մեծ պատերազմին մասնակից սյունեցիներից 9-ին շնորհվել է գեներալի, որոնցից Բագրատ Ասլանյանին (Գորիսի շրջանի Վերիշեն գյուղից)՝ գեներալ-լեյտենանտի, մյուսներին՝ գեներալ-մայորի կոչում:

Կ.Հարությունյանն անդրադարձել է նաեւ թիկունքում աշխատող սյունեցիներին, ովքեր արժանի ավանդ ներդրեցին ոսոխի դեմ տարած հաղթանակում: Չնայած պատերազմական տարիների դժվարին պայմաններին ու զրկանքներին, ռազմաճակատներից ստացվող հարազատների՝ մահվան բոթը գուժող «սեւ թղթերին»՝ Սյունիքի ժողովուրդը ոչ միայն պետական պլաններն էր կատարում, այլեւ Կարմիր բանակի ֆոնդին հանձնում լրացուցիչ միջոցներ: Քչերը գիտեն, շատերը չգիտեն, որ «Զանգեզուրի լեռնագործ» եւ «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյուների ստեղծման համար դրամական զգալի մուծումներ են կատարել Կապանի եւ Գորիսի աշխատավորները:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում արժանի ավանդ ունեն ԽՍՀՄ ռազմական արդյունաբերության եւ տնտեսության բնագավառում աշխատող սյունեցիները: Համո Յոլյանը եղել է հրետանային գործարանի տնօրեն, ում 1942-ին շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Տուլայի զինագործարանի գլխավոր ինժեներն էր գորիսեցի Սուրեն Վարդազարյանը: Քիմիական խոշոր գործարանի տնօրեն էր Լեոնիդ Կոստանդովը՝ արմատներով Կապանի Գեղանուշ գյուղից, Գուրգեն Վեզիրյանը (Կապանի շրջանի Վաչագան գյուղ) եղել է ԽՍՀՄ ավիացիայի արդյունաբերության նախարարի տեղակալ: Նոր ստեղծված ռազմական կործանիչ, ռմբակոծիչ եւ գրոհիչ ինքնաթիռներ էր փորձարկում օդաչու Բենիկ Օհանջանյանը (ծնվել է Կապանի Գեղանուշ գյուղում): Ստալինգրադյան ճակատամարտի օրերին քաղաքի պաշտպանության գործում կարեւոր ներդրում կատարեց «Հիդրոլիզ» գործարանի տնօրեն Նիկողայոս Միրզաջանի Օհանջանյանցը (Կապանի շրջանի Արծվանիկ գյուղից)…

Սյունեցիները, հավատարիմ մնալով Հայրենական մեծ պատերազմում հայերի մարտական ավանդույթներին, նշանակալի ավանդ ունեցան ինչպես Արցախյան պատերազմում, այնպես էլ նորանկախ Հայաստանի զինված ուժերի կազմավորման գործում: Հեղինակը հարկ է համարել ներկայացնել գեներալներ Վլադիմիր Հայրապետյանին եւ Մուրազ Սարգսյանին, ինչպես նաեւ Արցախյան գոյամարտի սյունեցի ակտիվ մասնակիցներին: Աշխատության մեջ տեղ են գտել սյունեցի գեներալների, Խորհրդային Միության հերոսների, կորպուսի եւ դիվիզիայի հրամանատարների, գնդի հրամանատարների, օդաչուների, տանկիստների, պատերազմին մասնակցած ակադեմիկոսների եւ գիտությունների դոկտորների, գրողների, հայկական նշանավոր դիվիզիաներում մարտնչած սյունեցիների լուսանկարները: Ընթերցողը գրքում ուշագրավ դրվագներ կգտնի պատերազմին մասնակից սյունեցիների մարտական ուղու մասին: Մնում է ավելացնել, որ այն նախատեսված է ընթերցողների լայն շրջանների համար: Գիրքը տպագրվել է Սյունիքի նախկին մարզպետ Սուրեն Խաչատրյանի հովանավորությամբ:

«Հասկանալի պատճառներով հնարավոր չէ մեկ գրքի սահմաններում ամբողջովին լուսաբանել Հայրենական մեծ պատերազմին մասնակցած բոլոր սյունեցիների կատարած սխրանքները, – առաջաբանում գրել է Կլիմենտ Հարությունյանը, - *դրա համար հարկավոր են մի քանի հատորներ: Ուստի հաշվի կառնենք ընթերցողների առաջարկությունները գրքի նոր հրատարակության ժամանակ»:*

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հ.Գ. *Հեղինակը խնդրել է գրքի մասին պատմող հրապարակման վերջում հետեւյալ բովանդակությամբ երկտողը տպագրել. «Շնորհավորում եմ Կապանի Անաստաս Միկոյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի 1956-1957 ուստարվա շրջանավարտ իմ համադասարանցիներին, նրանց ցանկանում քաջառողջություն, ընտանեկան երջանկություն, խաղաղություն, նոր հաջողություններ:*

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր

«Գանձասար-Կապանը» պարտվեց «Մլադոստին» եւ դուրս մնաց հեփագա պայքարից

Եվրոպայի լիգայի որակավորման առաջին փուլի պատասխան խաղում «Գանձասար-Կապանը» Հանրապետական մարզադաշտում ընդունել էր Պոդգորիցայի «Մլադոստին»:

Այս խաղում ավելի ուժեղ գտնվեցին հյուրերը եւ հաղթեցին 3:0 հաշվով:

Հիշեցնենք, որ թիմերի առաջին խաղում նույնպես հաղթել էր «Մլադոստը», բայց նվազագույն հաշվով:

«Գանձասարը» պարտվեց ընդհանուր 4:0 հաշվով եւ լքեց պայքարը:

06.07.2017թ.

ՅԱՎԱԿՅՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը վշտացած է ՀՀ Աժ պատգամավոր Մերուժան Սիմոնյանի հոր՝ Համլետ Սիմոնյանի մահվան կապակցությամբ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին ու մտերիմներին:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Ի սրտե երախտագիտություն եմ հայտնում «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության վիրաբուժական բաժանմունքի վիրաբույժներ Ասատուր Ասատուրյանին, Գագիկ Աթաջանյանին, անեստեզիոլոգ Սերգեյ Գասպարյանին՝ բարձր մակարդակով բուժսպասարկման եւ սրտացավ վերաբերմունքի համար:

Դոնարա Բաղդասարյան

ԿՈՐԵԼ Է Անժելիկա Գարիկի Հովհաննիսյանի առողջության պետական հավաստագիրը (N060336): Համարել անվավեր:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 13.07.2017թ.: